



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՒՍՏԱԳՐԱՄ

ԵՀՀ համալսարան

Սույն ձեռնարկը ներկայացնում է Հայաստանի արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության առաջնահերթությունները, ինչպես նաև անվտանգության հաստատությունների բարեփոխումների ռազմավարությունը: Ձեռնարկը նախատեսված է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ուսանողների և առհասարակ լայն շրջանակների համար՝ Հայաստանի ներկա արտաքին քաղաքականության մասին ընդհանրական պատկերացում տալու նպատակով:

Հեղինակներ

Անահիտ Շիրինյան

Սոսի Թաթևյան

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) տեսլականն է նպաստել նրան, որ Հարավային Կովկասը կայանա որպես խաղաղ, հակամարտություններից զերծ և համագործակցող տարածաշրջան, կաշքի ընկնի քաղաքացիների ներգրավման բարձր մակարդակով, սոցիալապես պատասխանատու ձեռներեցությամբ ու կայուն, պատասխանատու և արդյունավետ հասարակությամբ: ԵՀՀ-ն տարիներ շարունակ աշխատում է քննադատական մտածողության և այլընտրանքային կրթության մեթոդների ասպարեզում իր մի շարք ծրագրերում, ինչպես, օրինակ, մարդու իրավունքների, կոնֆլիկտների տրանսֆորմացիայի և խաղաղարարության, քաղաքացիական հասարակության հզորացման և այլն:

Սույն ձեռնարկը մաս է կազմում «ԵՀՀ համալսարան» խորագրի ներքո հրապարակվող ձեռնարկների շարքի: Շարքն ընդգրկում է գրույցներ չորս ծավալուն թեմաների վերաբերյալ.

- **Քննադատական մտածողություն (ՔՄ)**
- **Պատերազմ և խաղաղություն (ՊԽ)**
- **Քաղաքացիական հասարակություն (ՔՀ)**
- **Կրթություն, պատմության մեթոդաբանություն, մշակույթ և արժեքներ (ԿՊՄՄԱ)**

Ձեռնարկը ստեղծվել է «ՀԿ Դեպո – Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագրի» շրջանակում՝ Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Ծրագրի շրջանակում ստեղծված նյութերի բովանդակությունը կամ

արտահայտված տեսակետները միմիայն Եվրասիա համագործակցություն հիմնադրամինն են, և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

«ՀԿ Դեպո - Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագիրը» խթանում է քաղաքացիական հասարակության կայուն զարգացումը և ուժգնացնում ՀԿ-ների՝ որպես բարեփոխումներն առաջ մղող, ծառայությունները բարելավող և տնտեսական, ժողովրդավարական ու սոցիալական ոլորտներում արդյունավետ կառավարմանը նպաստող դերակատարների կարողությունները:

Նախարան ԵՀՀ-ից

Քաղաքացիական հասարակությանը (ՔՀ) տրվել են տարբեր բնութագրեր և ձևակերպումներ: Դրանք փորձում են սահմանել այն մեծ ծավալի աշխատանքը, որ ՔՀ կառույցները և կազմակերպությունները կատարում են՝ լուծելու հասարակության տարբեր խնդիրներ: ՔՀ կազմակերպությունների գործունեությունը, սակայն, միշտ չէ, որ գնահատվում է արժանի կերպով: Ի տարբերություն բիզնեսի, որի համար հեղինակություն ստեղծելը առաջնային է հաջողության հասնելու ճանապարհին, և պետական կառույցների, որոնք այսպես թե այնպես հանրության ուշադրության կենտրոնում են, ՔՀ-ների աշխատանքը և ազդեցությունը երբեմն անտեսանելի են մնում: Աշխատելով պետությունից հասարակություն, մարդուց օրենք, մարդուց հասարակություն, բիզնեսից մարդ, տեղականից միջազգային, հասարակությունից պետություն և մի շարք այլ վեկտորներով՝ ՔՀ-ները ստեղծում են անհրաժեշտ կապերը և լրացնում պակասող օղակները «մարդ-հասարակություն» համակարգի սահուն աշխատանքի համար:

Մեր օրերում, սակայն, ՔՀ-ները զբաղված են ոչ միայն այս պակասող օղակները լրացնելով և հասարակությունում առկա խնդիրները հայտնաբերելով ու վերացնելով, այլև դրանց լուծման համար միջոցներ հայթայթելով: Արդյունքում գրեթե ժամանակ չի մնում ինքնակրթվելու և կարողությունների զարգացման համար՝ ուժեղացնելու սեփական կազմակերպությունը, քանի որ ուժեղ կազմակերպությունը միայն կարող է արդյունավետ կերպով ծառայել հասարակության տարբեր խմբերի շահերին:

Միևնույն ժամանակ, Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) ՀԿ Դեպո ծրագրի շրջանակում ԱՄՆ ՄԶԳ-ի օժանդակությամբ բացառիկ հնարավորություն է ստացել ստեղծելու գործիքներ և գիտելիքի փոխանցման արդյունավետ միջոցներ, որոնք ՔՀ-ներին օգնում են մեծացնելու իրենց կայունության զարգացման և փոփոխություններին դիմակայելու հնարավորությունները:

Այս ձեռնարկը ստեղծված միջոցներից մեկն է, որի նպատակն է խնայել ՔՀ-ի աշխատակցի ժամանակը և մասնագիտական հսկայածավալ դասագրքերի ու լրատվահոսքի փոխարեն տրամադրել նրանց տարբեր ոլորտների առնչվող կառուցվածքային և վերլուծական ամենաանհրաժեշտ տեղեկատվությունը:

ԵՀՀ-ն մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում գիտելիքների և մտածելակերպի նորացման գործը, և «ԵՀՀ համալսարան» խորագրով հրատարակվող նյութերը ծառայում են այդ նպատակին:

Հուսով ենք՝ այս ձեռնարկը, ինչպես ԵՀՀ համալսարանի մյուս հրատարակումները, կաջակեն ՔՀ-ներին պետություն-ՔՀ համագործակցության, շահերի պաշտպանության, նոր նախաձեռնությունների գործընթացներում, ինչպես նաև բարելավելու իրենց ծառայություններն ու ռազմավարությունները:

Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները և անվտանգության ոլորտի բարեփոխումները

Նախաբան ԵՀՀ-ից.....3

Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները և անվտանգության ոլորտի բարեփոխումները.....4

1. Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնայնությունները.....5

2. Ազգային անվտանգության և անվտանգության հաստատությունների բարեփոխումների ռազմավարություն21

3. Անվտանգության հաստատությունների բարեփոխումներ (ԱՀԲ).....37

1. Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնայնությունները Անահիտ Շիրինյան

Համառոտագիր

Թեև Հայաստանն անկախացումից ի վեր ձգտել է վարելու և հռչակել է հավասարակշռված կամ բազմավեկտոր արտաքին քաղաքականություն, գործնականում Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ մինչ օրս գերակշռում է ռուսական ուղղությունը: Հոնտորաբանության և իրականության միջև տարբերությունը վկայում է այն մասին, որ Հայաստանի չբարձրաձայնվող հրատապ խնդիրը արտաքին քաղաքականության մեջ հարաբերական հավասարակշռության վերականգնումն է: Թավշյա հեղափոխությունից հետո նոր կառավարության հռչակած հայաստանակենտրոնության և ինքնիշխանության կարևորման սկզբունքները ենթադրում են որոշակի հավասարակշռում և մեկ վեկտորից գերկախվածության հաղթահարում: Ինչպես և նախկինում, այսօր ևս Հայաստանի արտաքին քաղաքականության թիվ մեկ խնդիրը աշխարհաքաղաքական փոքր կշռի բարդույթն է, որի հաղթահարման համար անհրաժեշտ են անսովոր լուծումներ սովորական խնդիրներին:

Ներածություն

1991 թ. անկախացումից ի վեր Հայաստանը ձգտել է վարելու հավասարակշռված և պրագմատիկ արտաքին քաղաքականություն, կառուցել իրավահավասար ու փոխշահավետ հարաբերություններ աշխարհաքաղաքական բոլոր կենտրոնների հետ՝ միաժամանակ փորձելով կարգավորել հարաբերությունները անմիջականորեն սահմանակից բոլոր հարևանների հետ: ՀՀ արտաքին քաղաքականությունն անկախության առաջին տարիներին հաճախ ներկայացվում և բնորոշվում էր որպես «հավասարակշռված»: Ավելի ուշ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանի կողմից շրջանառության մեջ դրվեց «փոխլրացման կամ կոմպլեմենտարության քաղաքականություն» տերմինը, որը, 2008 թվականից սկսած, փոխարինվեց «բազմավեկտոր» եզրույթով: 2013 թ. հետո Ռուսաստան-Եվրամիություն քաղաքական դիմակայության համատեքստում կիրառվում էր նաև «և/և»-ի քաղաքականության խոսույթը (ի հակադրություն «կամ/կամ»-ի անխուսափելի ընտրության սկզբունքի):

Թեև տերմինների բովանդակային տարբերությունը տարբեր իշխանությունների համար էական էր, ըստ էության դրանք բոլորը հանգում էին Հայաստանի արտաքին քաղաքականության թիվ մեկ մարտահրավերի դիմակայությանը՝ աշխարհաքաղաքական սրընթաց փոփոխությունների հորձանուտում փոքր պետության անվտանգության ապահովմանը:

Հայաստանի արտաքին քաղաքականությունը, ըստ էության, մինչ օրս խարսխվում է Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման պայքարի և դրանից բխող իրողությունների վրա: Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի և անվտանգության դե ֆակտո (փաստացի) երաշխավորը լինելով՝ Հայաստանը նաև անուղղակիորեն պատրաստակամություն է հայտնել կրել դրանից բխող հետևանքները, օրինակ՝ փակ սահմանները Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Մակայն արտաքին քաղաքականության մեջ հավասարակշռության պահպանումը գործնականում ավելի դժվար էր, քան թվում էր առաջին հայացքից: Քաղաքական ոչ ճիշտ

որոշումների հետևանքով, ինչպես նաև աշխարհաքաղաքական բազմաբնույթ այլ օբյեկտիվ պատճառներով Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ մինչ օրս գերակշռում է ռուսական ուղղությունը: Թեպետ Ռուսաստանի հետ հռչակված ռազմավարական գործընկերությունը միտված է լուծելու Հայաստանի առջև ծառայած թիվ մեկ խնդիրը՝ դիմակայել անվտանգության մարտահրավերներին (Ռուսաստանը դիտարկվում է որպես «կոշտ» ռազմական անվտանգության երաշխավոր Հայաստանի համար), սակայն այդ գործընկերության կառուցումը տեղի է ունեցել այլ պետությունների հետ հարաբերությունների թուլացման, իսկ հաճախ նաև երկրի ինքնիշխանության նվազման հաշվին: Արտաքին քաղաքականության մեջ հավասարակշռության «գոհաբերությունը» հօգուտ Ռուսաստանի հանգեցրել է վերջինիս հետ անհամաչափ դաշնակցության, որտեղ Հայաստանի անվտանգության ապահովումը և տնտեսական կայունությունը մեծապես կախված են Ռուսաստանի բարի կամքից: Հայաստանը գրեթե հայտնվել է հակասական փակուղային վիճակում. որքան շատ է Հայաստանը գոհաբերում իր ինքնիշխանությունը հանուն անվտանգության, այդքան ավելի խոցելի է դառնում նրա անվտանգությունը սեփական դաշնակցի կողմից:

Գիտակցելով նման քաղաքականության վտանգավորությունը՝ տարբեր ժամանակներում երկրի իշխանությունները փորձել են բազմաշերտ դարձնել Հայաստանի արտաքին քաղաքականությունը: Դրան էր միտված, օրինակ, Հայաստանի լռելյայն, բայց արագընթաց եվրախնտեգրման գործընթացը 2009-2013 թթ.: Այս ընթացքում Երևանը փորձեց իր բազմավեկտոր քաղաքականությունը կառուցել «ռազմական համագործակցություն Ռուսաստանի և տնտեսական՝ Եվրամիության հետ» սկզբունքի հիման վրա («և/և»-ի սկզբունք): Սակայն 2013 թ. սեպտեմբերի 3-ին Մաքսային (այժմ՝ Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)) միությանը միանալու Հայաստանին պարտադրված որոշումը ժամանակի ընթացքում փաստեց, որ արտաքին քաղաքական հավասարակշռության խախտումը չափազանց մեծ է և մանևրելու՝ խուսանավելու, ուղղությունը փոխելու հնարավորությունից Հայաստանը զրկվում է: Իսկ Արևմուտք-Ռուսաստան դիմակայությունը, որն ուժեղացավ 2014 թ. Ուկրաինայում՝ Ղրիմում և երկրի արևելքում ծագած հակամարտությունից հետո, է՛լ ավելի նվազեցրեց Հայաստանի արտաքին քաղաքականության մանևրման հնարավորությունը:

2018 թ. Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի նոր իշխանությունները երկրի արտաքին քաղաքականության համար որդեգրել են «հայաստանակենտրոն» գաղափարը և շեշտում են «ինքնիշխանության» կարևորությունը՝ որպես արտաքին քաղաքականության անկյունաքարի: Արտաքին քաղաքականության հռետորաբանության և իրականության միջև այս տարբերությունը վկայում է այն մասին, որ Հայաստանի չբարձրաձայնվող հրատապ խնդիրը արտաքին քաղաքականության մեջ հարաբերական հավասարակշռության վերականգնումն է:

Ղարաբաղյան հակամարտություն և կարգավորման ուղիներ (համառոտ անդրադարձ)

Ղարաբաղյան հիմնախնդիրը խոր արմատներ ունի: 1921 թ. Ղարաբաղը ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինի կողմից բռնակցվեց Ադրբեջանին, և շուրջ 70 տարի այդ հիմնախնդիրը արհեստականորեն սառեցվեց: Երկրամասի հարթավայրային հատվածը ձուլվեց Ադրբեջանին, իսկ լեռնային մասը ստացավ ինքնավարություն և մասամբ պահպանեց իր ինքնությունը մինչև 1988 թ. Արցախյան շարժումը, այնուհետև 1991 թ. անկախացումը՝ որպես Լեռնային Ղարաբաղի

Հանրապետություն: Ադրբեջանը, չհամակերպվելով նոր հայկական պետության ստեղծման մտքի հետ, պատերազմ սկսեց: Հակամարտությունը ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև ստացավ նաև միջազգային հնչողություն, և գերտերությունների միջամտությամբ սկիզբ դրվեց բանակցային մի գործընթացի, որը շարունակվում է մինչ օրս՝ շուրջ 25 տարի:

Ղարաբաղյան հակամարտության բանակցային պրոցեսն ընթանում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության՝ ԵԱՀԿ-ի (վերակազմավորվել է 1994 թ. դեկտեմբերին) Մինսկի խմբի հովանու ներքո: Մինչ այդ՝ դեռևս 1992 թ. մարտին, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ)՝ Հելսինկիում կայացած նիստում որոշվեց Մինսկում հրավիրել խորհրդածողով՝ խաղաղ լուծումներ գտնելու Ղարաբաղյան դեռևս ընթացող հակամարտության համար: Խորհրդածողովը այդպես էլ չկայացավ հակամարտող կողմերի միջև խոր անհամաձայնությունների պատճառով: 1994 թ. դեկտեմբերին ԵԱՀԽ/ԵԱՀԿ-ի Բուդապեշտի գազաթնաժողովը որոշեց գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով ձևավորել համանախագահների ինստիտուտ: 1997 թ. Մինսկում ԵԱՀԿ հովանու ներքո ստեղծվեց Մինսկի խմբի եռանախագահությունը (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա), որը մինչ այսօր կողմերի համար ընդունելի միակ համաձայնեցված ձևաչափն է և գործում է ԵԱՀԿ-ի մանդատի հիման վրա: Մինսկի խումբն ունի նաև ընդլայնված կազմ, որի մաս են կազմում Բելառուսը, Գերմանիան, Թուրքիան, Իտալիան, Նիդերլանդները, Պորտուգալիան, Շվեդիան, Ֆինլանդիան, ինչպես նաև Հայաստանը և Ադրբեջանը:

1994 թ. Ռուսաստանը ակտիվացրեց իր միջնորդական ջանքերը: Նույն թվականի մայիսի 5-ին Ռուսաստանի, Ղրղզստանի և ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի միջնորդությամբ Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում ստորագրվեց զինադադար հաստատելու վերաբերյալ արձանագրություն: Զինադադարի արձանագրությունը ստորագրեցին Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Ռուսաստանի, Ղրղզստանի և ԱՊՀ-ի ներկայացուցիչները: Ադրբեջանն արձանագրությանը միացավ օրեր անց: Բիշքեկյան արձանագրության հիման վրա Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտպանության գերատեսչությունների ղեկավարների միջև ստորագրվեց հրադադարի փաստաթուղթ, որն ուժի մեջ մտավ մայիսի 12-ին և գործում է առայսօր:

Հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցությունները մինչև 1996 թ. դեկտեմբերին կայացած ԵԱՀԿ-ի Լիսաբոնի գազաթնաժողովը եռակողմ էին՝ Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ (Ադրբեջանի պահանջով բանակցություններին մասնակցում էին ներկայացուցիչներ նաև Ղարաբաղից հեռացած ադրբեջանական համայնքից): ԵԱՀԿ-ի պաշտոնական փաստաթղթերում անգամ կարելի էր հանդիպել «Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչներ» ձևակերպումը: Բանակցություններին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչների մասնակցությանը կտրականապես դեմ էր Ադրբեջանը, որը մշտապես ձգտել և ձգտում է ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնելու որպես Հայաստանի և Ադրբեջանի միջև միջպետական հակամարտություն, իսկ Ղարաբաղը՝ Հայաստանի կողմից օկուպացված տարածք: 1998 թ. հետո ԼՂՀ-ն վերջնականապես դուրս մղվեց բանակցություններից, և նրան առայսօր այդ բանակցություններում ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը:

Տարբեր ժամանակահատվածներում Մինսկի խմբի համանախագահները հակամարտության կողմերին են ներկայացրել կարգավորման մի շարք առաջարկներ: 1997-1998 թթ. նրանք ներկայացրել են պաշտոնական երեք առաջարկ-տարբերակ, որոնք հայտնի են «Փաթեթային», «Փուլային» և «Ընդհանուր պետություն» անվանումներով: «Փաթեթային» տարբերակը Լեռնային Ղարաբաղի համար նախատեսում էր բարձր ինքնավարություն Ադրբեջանի կազմում, իսկ ԼՂ-ի վերահսկողության տակ եղող շրջանները, բացառությամբ Լաչինի միջանցքի, պետք է վերադարձվեին Ադրբեջանին: Այս տարբերակն ընդունվեց Ադրբեջանի կողմից, իսկ հայկական կողմերը մերժեցին այն:

«Փուլային» տարբերակով Ադրբեջանին էին վերադարձվում ԼՂ-ի կողմից վերահսկվող 7 շրջաններից 6-ը (Լաչինից բացի), իսկ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի լուծումը հետաձգվում էր: Այս տարբերակն ընդունելի էր Ադրբեջանի համար: Հայաստանը պատրաստ էր այն ընդունելու որպես հետագա բանակցությունների հիմք, իսկ ԼՂ-ն կտրականապես մերժեց:

1998 թ. նոյեմբերին հակամարտող կողմերին առաջարկվեց կարգավորման երրորդ՝ «Ընդհանուր պետության» տարբերակը, որով փորձ էր արվել ի մի բերելու նախորդ երկու ձախողված տարբերակները և կողմերի առարկությունները: Ըստ նոր առաջարկության՝ ԼՂ-ն հանրապետության կարգավիճակով ընդհանուր պետություն էր կազմավորում Ադրբեջանի հետ: Հայկական երկու պետությունները առաջարկը որպես բանակցությունների հիմք ընդունեցին վերապահումներով, իսկ Ադրբեջանը կտրականապես մերժեց: Առաջարկված երեք տարբերակներն էլ ենթադրում էին փոխզիջումային տրամաբանություն, որին պատրաստ չէր կողմերից և ոչ մեկը: Ուստի դրանք հանվեցին օրակարգից, իսկ բանակցություններն առժամանակ դադարեցվեցին:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հաջորդ հայտնի փուլը 2001 թ. Քոչարյան-Ալիև հանդիպումն էր Քի Վեսթում (կղզի ԱՄՆ-ի Ֆլորիդայի նահանգում): Այս բանակցությունների արդյունքում որևէ պաշտոնական փաստաթուղթ չի հրապարակվել: Բանակցությունների խորհրդավոր գաղտնիության բնույթը երկար ժամանակ իրարամերժ կարծիքների ու հայտարարությունների տեղիք է տվել: Ըստ տարբեր տեղեկությունների և գնահատականների՝ քիվեթայան բանակցությունների հիմքում առկա էր Հայաստանի և Ղարաբաղի միավորման հարցը, որը պետք է իրականացվեր երկուստեք միջանցքների փոխանակմամբ: Լեռնային Ղարաբաղը Հայաստանին էր միացվում Լաչինի միջանցքով, իսկ Ադրբեջանը Մեղրիով «սուվերեն անցում» էր ստանում դեպի Նախիջևան¹: Այս տարբերակը մերժվել է Ադրբեջանի կողմից, թեպետ կարծիքներ են հնչել, որ հակամարտող կողմերը շատ մոտ են եղել փոխըմբռնմանը և հիմնախնդրի կարգավորմանը: Բանակցությունները տևական ժամանակ մտան փակուղի:

2007 թ. նոյեմբերին Մինսկի խմբի համանախագահները ԵԱՀԿ-ի Մադրիդյան զագաթնաժողովին ներկայացրին հակամարտության խաղաղ կարգավորման 14 կետից բաղկացած հիմնարար սկզբունքներ, որոնք հետագայում ստացան «մադրիդյան սկզբունքներ» անվանումը: Մինչև Խաղաղության համաձայնագրի վերջնական ընդունումը, ըստ այդ

¹ Ավելի մանրամասն տե՛ս Թաթուլ Հակոբյան, *Մեղրի, Լաչին, Շուշի. Քի Վեսթի միջանցքները*, 4 հունիսի, 2019, Միվիլնեթ, www.civilnet.am/news/2019/06/04/Մեղրի-Լաչին-Շուշի-Քի-Վեսթի-միջանցքները/362037

սկզբունքների, նախատեսվում էր Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշում պլեբիսցիտի (ժողովրդական հանրաքվե, ժողովրդական հարցման տեսակ, որով որոշվում են տարածքային, ազգային ինքնորոշման և այլ կարևորագույն հարցեր)՝ ԼՂ-ի բնակչության ազատ կամարտահայտման միջոցով, ԼՂ-ի միջանկյալ կարգավիճակ նախքան վերջնական կարգավիճակի որոշումը, Լեռնային Ղարաբաղի շուրջը հայկական վերահսկողության տակ եղող տարածքների վերադարձ Ադրբեջանին, ԼՂ-ն և Հայաստանը կապող միջանցք, որի վերջնական կարգավիճակը կորոշվեր ԼՂ-ի վերջնական կարգավիճակը հաշվի առնելով, փախստականների և ներքին տեղահանված անձանց վերադարձ իրենց նախկին բնակության վայրեր, միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայում հակամարտության գոտում: Մադրիդյան սկզբունքները Հայաստանը և Ադրբեջանը ընդունել են որպես բանակցությունների հիմք: Հայտնի է, որ Մադրիդյան սկզբունքների սկզբնական տարբերակը տարիների ընթացքում փոփոխությունների է ենթարկվել:

Մադրիդյան սկզբունքները բնութագրող հիմնական գիծը բանակցային գործընթացներում հաճախ կիրառվող «կառուցողական երկիմաստությունն» է, ինչը թույլ է տալիս կողմերին տարբեր կերպ մեկնաբանել սկզբունքները, հետևաբար դրանք միանշանակ չեն մերժվում որևէ կողմից:

2015 թ. մամուլում սկսեց շրջանառվել ռուսական կողմից առաջ քաշված մի ծրագիր, որը հայտնի է «Լավրովի պլան» անունով: Նման ծրագրի գոյությունը բազմիցս ժխտվել է հայկական և ռուսական պաշտոնական շրջանակների կողմից, սակայն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հաստատվել հայաստանյան և արևմտյան հեղինակավոր վերլուծաբանների կողմից, իսկ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի ակամա խոստովանությամբ (2018 թ. դեկտեմբերին ԶԼՄ-ներին տված հարցազրույցում)² ինքնաբերաբար փաստվեց նման ծրագրի գոյությունը: Այս ծրագիր-առաջարկով Ղարաբաղի կարգավիճակի հարցը հետին պլան էր մղված՝ առաջնահերթ դիտարկելով ԼՂ-ի կողմից վերահսկվող տարածքներից հինգ շրջանների վերադարձը Ադրբեջանին, միաժամանակ ռուս/ՀԱՊԿ խաղաղապահների տեղակայումը հակամարտության գոտում:

Ղարաբաղյան հակամարտության խնդիրը բանակցությունների ամբողջ ընթացքում երբեմն-երբեմն հայտնվել է նաև գերտերությունների մրցակցության և աշխարհաքաղաքական շահերի բախման կիզակետում: Այսպես՝ Ռուսաստանը, ԵԱՀԿ-ի ջանքերին զուգահեռ, հաճախ հանդես է գալիս առանձին միջնորդական ջանքերով՝ դրանով ցույց տալով իր գերակայությունը նախկին ԽՍՀՄ տարածքների հանդեպ և «հավասարների մեջ առաջինը» լինելու հավակնությունը: 1990-ականներին ուժեղ մրցակցություն էր ընթանում Մինսկի խմբի արևմտյան թևի և Ռուսաստանի միջև: Ներկայումս Մինսկի խմբի համանախագահների միջև հարաբերությունները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում համագործակցային են, սակայն երբեմն ի հայտ են գալիս նաև մրցակցային տարրեր:

² Стé u «Лукашенко рассказал о предложениях по участию России и Беларуси в разрешении нагорно-карабахского конфликта» («Լուկաշենկոն պատմել է Ղարաբաղյան հակամարտությունը Ռուսաստանի և Բելառուսի մասնակցությամբ լուծելու առաջարկների մասին»), 14 декабря 2018, Белта, <https://www.belta.by/president/view/lukashenko-rasskazal-o-predlozhenijah-po-uchastiju-rossii-i-belarusi-v-razreshenii-nagorno-329365-2018/>

Միջազգային հանրության մոտեցումները Ղարաբաղյան հակամարտությանը և դրա կարգավորմանը հիմնականում պայմանավորված են տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքների միջև առկա հակասությունով: Թեև այս երկու սկզբունքներից որևէ մեկը իրավունքի տեսանկյունից մյուսի հանդեպ գերակայություն չունի, սակայն քաղաքական շահերի թելադրանքով պայմանավորված՝ պետությունները առաջնայնություն են տալիս տարածքային ամբողջականության սկզբունքին. պաշտոնապես միջազգային հանրությունը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Այս մոտեցումները, սակայն, ենթակա են փոփոխության՝ կախված տվյալ ժամանակաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական զարգացումներից, ինչպես նաև հակամարտության համատեքստից: Օրինակ՝ 90-ական թվականներին Ղարաբաղի հարցում զիջումների գնալու միջազգային ճնշումները Հայաստանի վրա շատ ավելի ուժեղ էին, քան հիմա: Այսօր արդեն արևմտյան պետությունների և կառույցների մի մասը հստակ կերպով արտահայտվում է, օրինակ, Վրաստանի և Ուկրաինայի տարածքային ամբողջականության օգտին, սակայն միննույն ժամանակ խուսափում է պաշտոնական փաստաթղթերում Ադրբեջանի տարածքային ամբողջականության առաջնայնությունն արձանագրել, թեև ֆորմալ առումով այն ճանաչում են:

Հայ-թուրքական հարաբերություններ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո (1991 թ. սեպտեմբերի 21) Թուրքիան ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը հատուկ հռչակագրով, որով միաժամանակ Հայաստանից պահանջում էր ճանաչել Թուրքիայի ներկայիս սահմանները՝ հաստատված 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով: Երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ, սակայն, այդպես էլ չհաստատվեցին:

Հարաբերությունների կարգավորման համար պատմական խնդիրներից բացի լուրջ խոչընդոտ է նաև դարաբաղյան հակամարտությունը. Թուրքիան իր անվերապահ գորակցությունն է հայտնում Ադրբեջանին, որի հետ ունի էթնիկ և լեզվական ընդհանրություններ: Դրա վաղ վկայությունն էր 1992 թ. Թուրքիայի կողմից գորքերի կուտակումը Հայաստանի հետ սահմանին. նախագահ Սուլեյման Դեմիրելը դիտարկում էր Թուրքիայի ռազմական միջամտության հարցը որպես աջակցություն եղբայրական Ադրբեջանին: Միայն Ռուսաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների զգուշացումները և պատերազմի աշխարհագրական ընդլայնման վտանգը կանխեցին իրադարձությունների հետագա զարգացումը: Իսկ 1993 թ. հայկական զորքերի կողմից Քարվաճառի (Քելբաջար) շրջանի վերահսկողությունից հետո Թուրքիան փակեց իր պետական սահմանը Հայաստանի հետ՝ որպես Ադրբեջանի հետ համերաշխության նշան:

Անկախությունից հետո Հայաստանի բոլոր ղեկավարները պարբերաբար փորձել են Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել առանց նախապայմանների, սակայն Անկարան մշտապես ցուցաբերել է խուսափողական քաղաքականություն և առաջ քաշել տարբեր նախապայմաններ՝ Հայաստանի կողմից ժամանակակից Թուրքիայի սահմանների ճանաչում, Ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ջանքերի դադարեցում, Լեռնային Ղարաբաղից և նրա վերահսկողության տակ եղող տարածքներից հայկական զորքերի դուրսբերում:

Մինչ այժմ Հայաստան-Թուրքիա հաշտեցման բոլոր ջանքերն ու փորձերը ձախողվել են: 2001 թ. հայ և թուրք տասը հասարակական գործիչներ ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Հայաստանից և Թուրքիայից ԱՄՆ-ի պետդեպարտամենտի աջակցությամբ Ժնևում ազդարարեցին Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովի ստեղծման (ԹՀՀՀ) մեկնարկը: Սա կիսապաշտոնական նախաձեռնություն էր՝ միտված նպաստելու Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը, ինչպես նաև հայերի և թուրքերի միջև փոխըմբռնման և բարի կամքի զարգացմանը: ԹՀՀՀ-ի ստեղծումը միանշանակ չընդունվեց. այն քննադատության էր արժանանում թե՛ Հայաստանում, թե՛ Թուրքիայում: Հանձնաժողովը պետք է քննարկումների արդյունքում առաջարկություններ ներկայացներ երկու երկրների կառավարություններին, սակայն կարճ ժամանակ անց պարզվեց, որ նրա անդամների միջև հակասություններ կան քննարկվող հարցերի վերաբերյալ: 2004 թ. հանձնաժողովը առաջարկություններ ներկայացրեց երկու պետությունների կառավարություններին և լուծարվեց իր առաքելության անորոշության պատճառով:

2005 թ. Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոհանը նամակով դիմում է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ առաջարկելով ստեղծել 1915 թ. իրադարձություններն ուսումնասիրող պատմաբանների հանձնաժողով: Պատասխան նամակով Ռ. Քոչարյանը փոխադարձ առաջարկեց ձևավորել ոչ թե բացառապես պատմաբանների, այլ միջպետական հանձնաժողով՝ քննելու երկու երկրների միջև առկա բոլոր խնդիրները: Առաջարկը թուրքական կողմից մնաց անպատասխան, և գործընթացը շարունակություն չունեցավ:

2007 թ. հունվարին Ստամբուլում իր գրասենյակի առջև դիմահար կրակոցից սպանվեց Թուրքիայի հայկական «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը: Դինքը հայ-թուրքական հաշտեցման, Թուրքիայի կողմից իր պատմության հետ առերեսվելու անհրաժեշտության հայտնի ջատագով էր: Դինքի հուղարկավորությունն ուղեկցվեց բողոքի զանգվածային ցույցերով, որոնց մասնակից հարյուրհազարավոր մարդիկ կրում էին «Մենք բոլորս Հրանտ ենք, մենք բոլորս հայ ենք» ցուցապաստառներ: Դինքի մահը հանգեցրեց հասարակական մի շարք փոփոխությունների Թուրքիայում: Նրա սպանությունը Թուրքիայում սկիզբ դրեց քաղաքացիական հասարակության, մշակութային գործիչների՝ սեփական անցյալին առերեսվելու գործընթացին: 2008 թ. դեկտեմբերին շուրջ 200 թուրք մտավորականներ նախաձեռնեցին «Ներդրություն եմ խնդրում» առցանց արշավը՝ ստորագրելով Մեծ եղեռնի փաստն ընդունող հայտարարության տեքստի տակ:

Հայ-թուրքական հաշտեցման գործընթացի հաջորդ փուլը 2008-2010 թթ. էին: 2008 թ. հունիսին Մոսկվայում ելույթի ժամանակ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Թուրքիայի նախագահ Արդուլլա Գյուլին հրավիրեց Երևան՝ սեպտեմբերին ՖԻՖԱ-ի աշխարհի առաջնության շրջանակում Հայաստանի և Թուրքիայի ազգային հավաքականների միջև կայանալիք ֆուտբոլային խաղը դիտելու: Այդ գործընթացը ստացավ «Ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումը: Այնուհետև Շվեյցարիայի միջնորդությամբ և ԱՄՆ-ի, ԵՄ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի աջակցությամբ հայ-թուրքական մերձեցման գործընթացը նոր թափ ստացավ: 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում կողմերը ստորագրեցին երկու արձանագրություն Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և հարաբերությունները զարգացնելու վերաբերյալ: Արձանագրությունները խիստ քննադատության ենթարկվեցին Հայաստանում և Սփյուռքում: Մասնավորապես խնդրահարույց էր նախատեսվող պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը, որը պետք է

ուսումնասիրեր 1915 թ. իրադարձությունները: Պատմաբանների հանձնաժողովի ստեղծման գաղափարը շահարկելով՝ Թուրքիան փորձում էր կասեցնել Ցեղասպանության միջազգային ճանաչման ընթացքը: Արձանագրություններին կտրականապես դեմ էր նաև Ադրբեջանը: Վերջինս շարունակում էր լուրջ ազդեցություն ունենալ Թուրքիայի վրա էներգետիկ հոսքերի, տնտեսական ներդրումների, ինչպես նաև ազգայնականների հետ ունեցած կապերի միջոցով:

Երկու պետությունների կողմից արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիան կտրուկ փոխեց իր դիրքորոշումը և հրաժարվեց արդեն իսկ ձեռք բերված համաձայնությունների կատարումից՝ դրանց իրականացումը պայմանավորելով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմամբ: Թուրքիայի նման գործելաճճը և կեցվածքն ի վերջո հայ-թուրքական հաշտեցման գործընթացը հանգեցրին փակուղու: 2010 թ. ՀՀ նախագահի հրամանագրով արձանագրությունների վավերացման գործընթացը Ազգային ժողովում առկախվեց (արձանագրությունների վավերացումը սառեցված էր նաև Թուրքիայի խորհրդարանում): 2015 թ. դրանք հետ կանչվեցին Ազգային ժողովից: Վերջապես 6 տարի անց՝ 2018 թ. մարտի 1-ին, ՀՀ նախագահի հրամանագրով արձանագրությունների կնքման ընթացակարգը դադարեցվեց:

Չնայած հայ-թուրքական պաշտոնական հաշտեցման գործընթացը ձախողվեց, և ցյուրիիսյան արձանագրությունները օրակարգից դուրս եկան, այնուամենայնիվ, վեցամյա այս շրջափուլը նշանակալի դեր խաղաց Հայաստանի և Թուրքիայի քաղաքացիական հասարակությունների, առաջադեմ ուժերի միջև կապերի հաստատման համար: Թուրքիայում 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո քաղաքացիական հասարակությունը շարունակում է ճնշված մնալ, սակայն երկու երկրների քաղաքացիությունների ու մտավորականության միջև կապերը վերականգնելու և ակտիվացնելու հնարավորությունը սպառնալից չէ և ապագայում կարող է նոր որակ ստանալ:

Հարկ է նշել, որ Թուրքիայի տարաբնույթ աջակցությունը Ադրբեջանին և տնտեսական շրջափակումը լուրջ ազդեցություն են թողնում Հայաստանի անվտանգության և արտաքին քաղաքականության վրա, սահմանափակում Հայաստանի տնտեսական հնարավորությունները, ազդում երրորդ երկրների հետ հարաբերությունների վրա: Օբյեկտիվ իրողություն լինելով հանդերձ՝ այս հանգամանքը տարիներ շարունակ Հայաստանին ներքաշել է աշխարհաքաղաքական դետերմինիզմի (դատապարտվածության, կանխորոշության) ծուղակը և պետության արտաքին քաղաքականությունը դարձրել հիմնականում արձագանքող:

Հայ-ռուսական հարաբերություններ

1990-ականների սկզբից Թուրքիայի անվերապահ աջակցությունը պատերազմող Ադրբեջանին սեղմեց անվտանգության օղակը Հայաստանի շուրջը: Ռուսաստանի հետ հարաբերությունները ձեռք բերեցին հատուկ նշանակություն. եթե Հայաստանը կարող էր իր ռազմական առավելությամբ հակակշռել պատերազմում պարտություն կրած Ադրբեջանին, ապա վերջինիս դաշնակից Թուրքիայից սպասվող պոտենցիալ սպառնալիքները ստիպում էին Հայաստանին փնտրել համարժեք դաշնակցի, որը կդառնար զսպող ուժ և անվտանգության երաշխավոր: Այդ ուժը պատմական իրողությունների բերումով դարձավ Ռուսաստանը, որի հետ բարեկամական հարաբերություններն ունեին հարյուրամյակների պատմություն: 1995 թ. Մոսկվայում Հայաստանի և Ռուսաստանի նախագահներ Լևոն Տեր-Պետրոսյանի և Բորիս Ելցինի

ստորագրած պայմանագրով ստեղծվեց Գյումրիի ռուսական 102-րդ ռազմակայանը՝ 25 տարի ժամկետով: Այն միաժամանակ ապահովում էր Ռուսաստանի ռազմաքաղաքական ներկայությունը տարածաշրջանում, ինչը խիստ կարևոր հանգամանք էր նրա համար: Ավելի ուշ՝ 2010 թ., պայմանագրին ավելացված համաձայնագրով ռազմակայանի տեղակայման ժամկետը երկարացվեց մինչև 2044 թ.: Երկու պետությունների միջև ռազմաքաղաքական, տնտեսական ու գիտամշակութային համագործակցության անկյունաքարերից է 1997 թ. ստորագրված Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը: Բացի դրանից՝ Հայաստանը և Ռուսաստանը գտնվում են միևնույն ռազմաքաղաքական դաշինքում՝ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում (ՀԱՊԿ՝ 1992 թ.), որի մյուս անդամներն են Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: ՀԱՊԿ-ն, սակայն, Ռուսաստանի հետ ավելի շուտ երկկողմ, քան բազմակողմ հարաբերությունների լրացուցիչ հարթակ է. ՀԱՊԿ անդամների ռազմաքաղաքական շահերը հաճախ չեն համընկնում և նույնիսկ հակասում են իրար:

Ռուսաստանը և Բելառուսը, օրինակ, զենք են վաճառում ՀԱՊԿ անդամ չհանդիսացող Ադրբեջանին՝ հաշվի չառնելով գործընկեր Հայաստանի շահերը: Երկկողմ և բազմակողմ պայմանագրային այս հիմքը, այնուամենայնիվ, թույլ է տալիս Հայաստանին ռուսական զենք գնել ցածր գներով: Պայմանագիրը կողմերին պարտավորեցնում է նաև փոխադարձաբար օգնել միմյանց ռազմական հարձակման դեպքում: Հայաստանում ռուսական ռազմաբազայի գոյությունը և պայմանագրային պարտավորությունը հենց այն հիմքն են, որով Ռուսաստանը դառնում է Հայաստանի անվտանգության երաշխավորը:

Հայ-ռուսական հարաբերությունների աշխարհաքաղաքական բովանդակությունը լուրջ փոփոխությունների է ենթարկվել 90-ականներից ի վեր: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ նախորդ դարի 90-ականներին, Ռուսաստանը և Թուրքիան լուր մրցակիցներ էին Հարավային Կովկասում և հարակից տարածաշրջաններում՝ ձգտելով ընդլայնելու իրենց ազդեցության գոտիները: Եթե Ադրբեջանը Թուրքիայի համար հուսալի դաշնակից էր, ապա Ղաբաբադյան պատերազմում առավելություն ձեռք բերած Հայաստանը կարևոր գործընկեր և դաշնակից էր Մոսկվայի համար: Այդ շրջանում համընկնում էին նաև Հայաստանի և Ռուսաստանի զարգացման տեսլականները: Թեև Ռուսաստանը հետխորհրդային տարածքն արդեն իսկ համարում էր իր հատուկ շահերի գոտի, քայքայված տնտեսությունը վերականգնելու և երկրի հեղինակությունը բարձրացնելու ճանապարհը տեսնում էր եվրասիական տարածքային կառույցներին ինտեգրվելու և ժողովրդավարություն կառուցելու գործընթացներին ներգրավվելու մեջ:

Սակայն Ռուսաստանի քաղաքական դաշտում զարգացման այս ուղղության հետևորդների՝ Ատլանտիստների և ռուսական ինքնուրույն ուղու ջատագով Եվրասիականների միջև պայքարն ի վերջո ավարտվեց Եվրասիականների հաղթանակով: Միջազգային հարաբերություններում ինքնուրույն և Արևմուտքին հավասար աշխարհաքաղաքական գործոն դառնալու Ռուսաստանի ձգտումն իր բարձրակետին հասավ նախագահ Վ. Պուտինի իշխանության տարիներին: Այս փոխակերպումը Հայաստանի հետ Ռուսաստանի հարաբերություններում ունեցավ մի շարք հետևանքներ: Մասնավորապես Արևմուտքի հետ մրցակցության և հակադրության մեջ մտած Ռուսաստանը սկսեց իր գերակայությունը հաստատել հետխորհրդային տարածքում, ինչը Հայաստանի դեպքում դրսևորվեց վերջինիս կոմպլեմենտար քաղաքականության հանդեպ ռուսական աճող դժգոհությամբ: 2000-ականների սկզբից հայտնի «գույք պարտքի դիմաց» գործարքով ռուսական պետական

կազմակերպությունները սկսեցին ձեռք բերել Հայաստանի ռազմավարական նշանակության օբյեկտները: Ռուսական վերահսկողությունը Հայաստանի հեռահաղորդակցության, գազի և էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցի, երկաթուղու հանդեպ լուրջ կախվածության մեջ դրեց Հայաստանին իր դաշնակցից՝ զրկելով նրան ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորություններից: Ավելին՝ 2007 թ. շահագործման հանձնված հայ-իրանական գազամուղը Ռուսաստանի միջամտության հետևանքով այսօր ունի ավելի փոքր թողունակություն, քան ի սկզբանե նախատեսված էր: Միաժամանակ Ռուսաստանը սկսեց ընդլայնել համագործակցությունը տարածաշրջանի այլ երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ: Ռուս-թուրքական մերձեցումը մասամբ պայմանավորված էր Արևմուտքի հետ խնդիրներ ունեցող երկու պետությունների համընկնող շահերով: Մոսկվայի խնդիրն էր նաև թույլ չտալ, որ դեպի Արևմուտք ձգվող գազամուղներով հիդրոկարբոնների (ածխաջրածին) վաճառքից հսկայական եկամուտներ ստացող Ադրբեջանը միանշանակ կողմնորոշվի դեպի Արևմուտք:

2000-ականներից Ռուսաստանը սկսեց խորացնել ռազմական շփումները Ադրբեջանի հետ՝ մասնավորապես իրականացնելով գենքի մեծածավալ վաճառք: Ըստ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (SIPRI) տվյալների՝ եթե մինչ 2011 թ. Ռուսաստանը մատակարարում էր Ադրբեջանի սպառազինությունների շուջ 55 %-ը, ապա 2015 թ. այդ թիվը հասավ 85 %-ի³: Հակասությունը հայ-ռուսական հոչակված ռազմավարական դաշնակցության և Հայաստանի հակառակորդների հետ Ռուսաստանի սերտ համագործակցության միջև ակնհայտ էր:

Այսպիսով՝ Հայաստանը չի կարողացել պատշաճ գնահատել իրավիճակը և արձագանքել Ռուսաստանի մարտավարական փոփոխություններին, ինչի հետևանքով հայ-ռուսական հարաբերությունները դարձել են խիստ անհամաչափ և ուղիղ կախվածության մեջ դրել Հայաստանին իր դաշնակցից: Հայաստանի արտաքին քաղաքականության հավասարակշռության խախտումը պայմանավորված էր նաև Հայաստանում տևական ժամանակ առկա ժողովրդավարության ցածր մակարդակով: Մինչև 2018 թ. Հայաստանի իշխանությունները, չունենալով բավարար լեգիտիմություն երկրի ներսում, հաճախ հենվել են արտաքին դերակատարների և հատկապես Մոսկվայի վրա՝ պահպանելու համար իրենց իշխանությունը՝ այդ ընթացքում զոհաբերելով երկրի ինքնիշխանությունը:

Հայաստան-Արևմուտք. ընկալումներ և մոտեցումներ

Հայաստան-Արևմուտք հարաբերությունները նշանավորվում են դուալիզմով (երկվություն, իրարամերժ հակադրություն). թեև Հայաստանն իրեն համարում է եվրոպական քաղաքակրթության մաս և կրող, աշխարհաքաղաքական առումով Հայաստանը և Արևմուտքը հաճախ հայտնվում են տարբեր, նույնիսկ հակադիր ճամբարներում:

³ Stockholm International Peace Research Institute, «Trends in International Arms Transfers, 2011» (Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտ, «Ձենքի միջազգային վաճառքի միտումներ»), March 2012, <https://www.sipri.org/sites/default/files/files/FS/SIPRIFS1203.pdf> և Joshua Kucera, «Report: Azerbaijan Gets 85 Percent Of Its Weapons From Russia» (Չոշուա Կուչերա, «Ձեկույց. Ադրբեջանը իր գենքի 85 %-ը ձեռք է բերում Ռուսաստանից»), Eurasianet, 17 March 2015, <http://www.eurasianet.org/node/72581>

Պատմականորեն Հայկական հարցի հանդեպ արևմտյան տերությունների քաղաքականությունը Ցեղասպանությանը (1915 թ.) նախորդող և հաջորդող տասնամյակներում հանգեցրել էր Արևմուտքի հանդեպ հայերի հիասթափության և թերահավատության⁴: Այսօր էլ նման թերահավատությունը շարունակվում է պահպանվել, ինչը պայմանավորված է արևմտյան պետությունների պրագմատիկ քաղաքականության, Ադրբեջանի «խավիարային դիվանագիտության» հարաբերական հաջողության, Թուրքիայի հետ Արևմուտքի դաշնակցության առկա հանգամանքներով: Հայաստանի մասին Արևմուտքի ընկալումներն իրենց հերթին հաճախ կարծրատիպային են: Ռուսաստանի հանդեպ արևմտյան պետությունների բացասական վերաբերմունքը ինքնաբերաբար տարածվում է Հայաստանի վրա՝ որպես Ռուսաստանի դաշնակցի՝ առանց հաշվի առնելու Հայաստանի աշխարհագրական դիրքը և աշխարհաքաղաքական սահմանափակումները: Արևմտյան քաղաքական մտքի համար Հայաստանը, որպես կանոն, կարևորություն չի ներկայացնում, այստեղից էլ՝ մակերեսային մոտեցումներն ու անհետաքրքրությունը Հայաստանի հանդեպ: Հայաստանն, իհարկե, ունի մեղքի իր բաժինը նման ընկալումների համար, քանի որ իր վարած արտաքին քաղաքականությամբ ձեռք է բերել ռուսական շահերին (հաճախ նույնիսկ ի վնաս սեփական շահերի) անվերապահ աջակցողի համբավ:

Հայ-ամերիկյան հարաբերություններ

1990-ականների սկզբին Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ ամերիկյան ուղղությունը կարևոր դեր ուներ: Հայ-ամերիկյան կապերի ստեղծմանն ու խորացմանը զգալիորեն նպաստում էր ԱՄՆ-ի հայկական մեծաքանակ սփյուռքը, ինչպես նաև այնտեղ գործող հայկական ավանդական ազդեցիկ կազմակերպությունները: Ամերիկյան մամուլն ընդհանուր առմամբ նույնպես դրական էր տրամադրված նորանկախ և ժողովրդավարական ուղին բռնած Հայաստանի նկատմամբ: Հայաստանն ընկալվում էր որպես «ժողովրդավարության կղզյակ»՝ ի տարբերություն իր հարևան «ձախողված պետությունների»՝ Վրաստանի և Ադրբեջանի: Հարավկովկասյան տարածաշրջանի հանդեպ ԱՄՆ-ը դեռևս չունի մշակված հստակ քաղաքականություն, և այդ պայմաններում «ժողովրդավարության կղզյակ» Հայաստանը վայելում էր ամերիկյան քաղաքական վերնախավի համակրանքը:

Ստեղծված բարենպաստ պայմանները հնարավորություն տվեցին Հայաստանին (ինչպես նաև Լեռնային Ղարաբաղին) ֆինանսական և հումանիտար աջակցություն ստանալու Միացյալ Նահանգներից և որոշակի լոբբիստական ազդեցություն ունենալու ԱՄՆ-ի Կոնգրեսում: ԱՄՆ-ում հայկական լոբբիստական ջանքերի շնորհիվ 1991 թ. ԱՄՆ-ի Ներկայացուցիչների պալատի և Սենատի կողմից ընդունված «Ազատության աջակցության ակտ»⁵ օրենքում ներառվեց 907-րդ բանաձևը, որով արգելվում էր ԱՄՆ-ի կողմից ֆինանսական և այլ աջակցությունը Ադրբեջանին, քանի դեռ վերջինս շրջափակված էր պահում Հայաստանի հետ սահմանը:

⁴ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ *Alla Mirzoyan, Armenia, the Regional Powers, and the West: Between History and Geopolitics* (Ալլա Միրզոյան, *Հայաստանը, տարածաշրջանային ուժերը և Արևմուտքը. պատմության և աշխարհաքաղաքականության միջև*), New York: Palgrave Macmillan, 2010.

⁵ Օրենքով նախատեսվում էր աջակցել հետխորհրդային տարածաշրջանի նորանկախ պետություններին՝ հաղթահարելու դեմոկրատացման դժվարությունները և ազատականացնելու տնտեսությունը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության հավանական կողմի աջակից Ղարաբաղյան հակամարտության հարցում:

Արդեն 1990-ականների երկրորդ կեսից ԱՄՆ-ի շահերը հարավկովկասյան տարածաշրջանում ավելի հստակեցվեցին: Ամերիկյան վարչակազմը աստիճանաբար փոխեց իր բարյացակամ քաղաքականությունը Հայաստանի հանդեպ: Դրան նպաստեց մի կողմից՝ Հայաստանում ժողովրդավարության հետընթացը, մյուս կողմից՝ դեպի Արևմուտք Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսների տեղափոխման շահեկան հեռանկարը, ինչպես նաև Իրանին զայելու գործում Ադրբեջանի հնարավոր դերակատարումը: 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշ կրտսերը դիմեց Կոնգրեսին 907-րդ բանաձևում փոփոխություն կատարելու և Ադրբեջանին աջակցելու սահմանափակումը վերացնելու խնդրանքով: Հոկտեմբերին «Ազատության աջակցության ակտ»-ի 907-րդ բանաձևը փոփոխության ենթարկվեց: ԱՄՆ-ի նախագահը փոփոխությունը հիմնավորեց ազգային անվտանգությանը սպառնացող վտանգի չեզոքացման, հակաահաբեկչական գործողություններին Ադրբեջանի կողմից մասնակցության գործոնով, որոնք բխում էին ԱՄՆ-ի շահերից: Միաժամանակ վստահեցվեց, որ ռազմական ու ֆինանսական օգնությունը չի ազդելու Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վրա: Պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ 2001 թ. հետո Ադրբեջանը կարևոր տարանցիկ երկիր էր դիտարկվում ԱՄՆ-ի և վերջինիս դաշնակիցների համար Աֆղանստանում ծավալվող ռազմական գործողություններում: Վրաստանում 2003 թ. տեղի ունեցած Վարդերի հեղափոխությունը արժանացավ ԱՄՆ-ի հատուկ ուշադրությանը և մեծածավալ ռազմական ու ֆինանսական աջակցությանը: Ժողովրդավար Վրաստանի և էներգետիկներով հարուստ Ադրբեջանի հետ համեմատության մեջ Հայաստանի տարածաշրջանային վարկանիշն անկում ապրեց:

Հենց այս շրջանում Արևմուտք-Ռուսաստան հարաբերությունները մտան դիմակայության նոր փուլ: Հայաստանի արտաքին քաղաքական հավասարակշռությունը սկսեց խախտվել հոգուտ Ռուսաստանի: ԱՄՆ-ի շահերի փոխակերպումը և Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշումը դեպի Ռուսաստան միանգամայն հստակեցրին Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի վերաբերմունքը Հայաստանի հանդեպ: Այսպես, օրինակ, Վարդերի հեղափոխությունը Վրաստանում (2003) և Նարնջագույն հեղափոխությունը Ուկրաինայում (2004) նոր բաժանարար գիծ քաշեցին հետխորհրդային տարածքում Արևմուտքի բարեկամների և «մյուսների» միջև: Հայաստանը սկսեց ընկալվել որպես ռուսամետ պետություն:

Այնուամենայնիվ, հայկական Միյուքի առկայությունը և ազդեցությունը ԱՄՆ-ի Կոնգրեսում հնարավորություն էր տալիս հայ-ամերիկյան հարաբերությունները պահելու բարեկամական պատշաճ մակարդակի վրա: Այս հանգամանքը, սակայն, միայն ընդգծում է Կոնգրես-Մայիտակ տուն քաղաքական մոտեցումների տարբերությունը Հայաստանի հետ հարաբերություններում: Այսպես՝ Մայիտակ տան դիրքորոշումը Հայաստանի հանդեպ հաճախ փոփոխությունների է ենթարկվում՝ պայմանավորված նրանով, թե ով է տվյալ պահին նախագահում՝ հանրապետական, թե՞ դեմոկրատ գործիչ: Խնդիրն այն է, որ Մայիտակ տան դեմոկրատական վարչակազմերը ավանդաբար որդեգրում են ավելի իդեալիստական կամ այտրուիստական (այլասիրական, այլոց կարիքներին անշահախնդիր ծառայություն) արտաքին քաղաքական ուղղություն՝ արտաքին հարաբերություններում հաշվի առնելով պատմական, արժեհամակարգային ընդհանրությունները: Ի տարբերություն

դեմոկրատների՝ հանրապետականները նախապատվությունը տալիս են ԱՄՆ-ի ռազմավարական շահերին և որդեգրում դրանից բխող քաղաքականություն: Դա է պատճառը, որ հայ-ամերիկյան հարաբերությունների համեմատաբար դինամիկ զարգացում է նկատվում դեմոկրատական վարչակազմերի կառավարման ժամանակ: Հանրապետականների ավելի ազդեցիկ ու հաշվենկատ արտաքին քաղաքականությունը հաճախ Հայաստանին երկրնտրանքի առաջ է կանգնեցնում՝ հանգեցնելով բարդ ընտրության, հետևաբար նաև հարաբերությունների լարման: Հանրապետական Ջորջ Բուշ կրտսերի նախագահության շրջանում, օրինակ, Վաշինգտոնը Հայաստանի վրա ճնշում էր գործադրում՝ միանալու իրաքյան ռազմական արշավին, իսկ Թրամփի վարչակազմը տարածաշրջանի երկրներից ակնկալում է միանալ Իրանին՝ ճնշելու Վաշինգտոնի քաղաքականությունը:

2016 թ.՝ ԱՄՆ-ում Դոնալդ Թրամփի նախագահ ընտրվելուց հետո, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը կրկին փոփոխությունների ենթարկվեց: Նախագահ Թրամփը հարցականի տակ դրեց ԱՄՆ-ի մասնակցության շահավետությունը մի շարք միջազգային բազմակողմ պայմանագրերին, այդ թվում՝ Եվրոպային ԱՄՆ-ի կողմից անվտանգության երաշխիքների համար ավանդաբար տրամադրվող ֆինանսական միջոցների նպատակահարմարությունը: Թրամփը նախապատվություն է տալիս երկկողմ, բացառապես գործնական շահերի վրա հիմնված պայմանավորվածություններին կամ հարաբերություններին, որտեղ ԱՄՆ-ի շահերը առաջին տեղում են: Նա զգալիորեն կրճատեց այլ երկրներին, այդ թվում՝ Հայաստանին հատկացվող ամենամյա ֆինանսական աջակցությունը, թեև Վաշինգտոնն ու Երևանը ավելի վաղ էին սկսել համագործակցել «օգնությունից դեպի առևտուր» սկզբունքով:

2018 թ. մայիսին Վաշինգտոնը միակողմանիորեն դուրս եկավ Իրանի հետ միջուկային համաձայնագրից («Համալիր գործողությունների համատեղ ծրագիր» (ՀԳՀՕ), 2015 թ.) և կրկին պատժամիջոցներ սահմանեց Իրանի հանդեպ: Հարավային Կովկասի ուղղությամբ Թրամփի վարչակազմի քաղաքականությունը հիմնականում խարսխվեց Իրանին պատժելու առաջնայնության վրա: Հայաստանը, որի նպատակն է անվտանգության և տնտեսական զարգացման նկատառումներից ելնելով լավ հարաբերություններ պահպանել երկու երկրների հետ միաժամանակ, կրկին բարդ իրադրության մեջ է հայտնվել:

Հայաստան – ԵՄ հարաբերություններ

Մինչև 2013 թ. հայաստանյան քաղաքական-հասարակական շրջանակներում կար ընդհանուր կոնսենսուս (համաձայնություն, համերաշխություն) Հայաստանի եվրաինտեգրման ուղղությամբ շարժվելու հարցում: Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ ԵՄ-ն (Եվրոպական միություն) տարածաշրջանում չունեք ակնհայտ աշխարհաքաղաքական հավակնություններ: Ժողովրդավարական և ազատ շուկայական տնտեսության ինստիտուտների կայացմանն ուղղված ԵՄ-ի աջակցությունը համարվում էր Հայաստանի տնտեսության զարգացման և արդիականացման կարևոր խթան:

2004 թ. ԵՄ-ի սահմանների հերթական ընդլայնման համատեքստում Բրյուսելը (Եվրոպական միության կենտրոնը՝ մայրաքաղաքը) սկսեց ավելի մեծ ուշադրություն հատկացնել իր նոր հարևաններին: Ալտրաիստական նկատառումներից բացի՝ ԵՄ-ն ընտրել էր առաջին հերթին իր սահմանների երկայնքով կայուն և կանխատեսելի պետությունների շղթա ստեղծելու

ռազմավարությունը: Դեռ 2003 թ. Բրյուսելը հանդես եկավ Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրով, որտեղ ընդգրկվեցին ԵՄ-ից հարավ և արևելք ընկած 16 պետություններ, այդ թվում՝ Հայաստանը: 2009 թ. Եվրամիությունը հետխորհրդային վեց երկրների ընդգրկեց «Արևելյան գործընկերություն» (ԱլԳ) ծրագրում՝ ընդառաջելով նրանց եվրաինտեգրման ձգտումներին: Նրանց թվում էր նաև Հայաստանը: Ռուս-վրացական պատերազմի հետևանքով ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակը այս ծրագիրն ավելի հրատապ ու առաջնահերթ դարձրեց: Այն հնարավորություն էր տալիս ԱլԳ-ի երկրներին «ավելին ավելիի դիմաց» սկզբունքով աջակցություն ստանալու Բրյուսելից ժողովրդավարական բարեփոխումների և տնտեսական զարգացման համար՝ միաժամանակ ավելի սերտ ինտեգրվելով Եվրամիության հետ (ծրագիրը չէր ենթադրում անդամակցություն Եվրամիությանը): ԱլԳ-ն, սակայն, ուներ նաև աշխարհաքաղաքական ենթատեքստ, ինչը թշնամաբար ընդունվեց Ռուսաստանի կողմից: Հարավկովկասյան տարածաշրջանում ԱՄՆ-Ռուսաստան դիմակայությանը փոխարինելու էր գալիս ԵՄ-Ռուսաստան դիմակայությունը: 2008 թ. ռուս-վրացական պատերազմը ակնառու դարձրեց Հայաստանի խոցելիությունը. կախվածությունը ինչպես Ռուսաստանից, այնպես էլ Վրաստանի տարանցիկ ուղուց, որը կենսական նշանակությունի ունի երկրի համար: Անհրաժեշտություն էր այլընտրանքային նոր ուղիների փնտրտուքը: Հենց այս համատեքստում Հայաստանի արտաքին քաղաքականությունը որոշակի վերանայումների ենթարկվեց. Երևանը սկսեց մի կողմից արագ, բայց լուր եվրաինտեգրման գործընթաց, մյուս կողմից՝ հայ-թուրքական հաշտեցման գործընթաց:

2009-2013 թթ. Հայաստանը, ինչպես Վրաստանը, Ուկրաինան և Մոլդովան, ԵՄ-ի հետ բանակցեց Ասոցացման համաձայնագիր կնքելու շուրջ: Այս շրջանում Հայաստանը զգալի առաջընթաց գրանցեց ԵՄ-ի հետ իր օրենսդրության համապատասխանեցման և մոտարկման, ինչպես նաև տեխնիկական այլ բարեփոխումների ուղղությամբ: Համաձայնագիրը քաղաքական բաղադրիչներից բացի ուներ նաև առևտրային ու տնտեսական բաղադրիչ՝ «Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր»: Հայաստանի համար այս համաձայնագրի ստորագրումը իր հայտարարած բազմավեկտոր քաղաքականության արդյունավետ ու դրական արտահայտությունը կլիներ. թույլ կտար զարգացնել տնտեսական համագործակցություն ԵՄ-ի հետ՝ շարունակելով անվտանգային համագործակցությունը Ռուսաստանի հետ:

2013 թ. սեպտեմբերի 3-ին, սակայն, Մոսկվայում նախագահ Սերժ Սարգսյանը անսպասելիորեն (ենթադրաբար Ռուսաստանի ճնշման տակ) հայտարարեց Եվրասիական տնտեսական ընկերակցության շրջանակներում (ԵվրԱզԷՍ) Մաքսային միությանը միանալու Հայաստանի մտադրության մասին: Այս որոշումը տեխնիկապես անհնար դարձրեց ԵՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը: Սա լուրջ հարված էր Հայաստանի միջազգային հեղինակությանը և ինքնիշխանությանը: Հայաստանն այնուհետև երկարատև լուրջ ջանքեր պետք է գործադրեր ԵՄ-ի վստահությունը վերականգնելու համար: Սեպտեմբերի 3-ը նաև ազդարարեց ԵՄ-Ռուսաստան աշխարհաքաղաքական շահերի բախման սկիզբը: Այնուամենայնիվ, չդադարեցին ԵՄ-ի հետ համագործակցության աշխատանքները:

Ի վերջո՝ 2017 թ. նոյեմբերին, Հայաստանը և ԵՄ-ն ստորագրեցին նոր շրջանակային համաձայնագիր՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը՝ որպես

այլընտրանք ձախողված Ասոցացման համաձայնագրին՝ առանց ազատ առևտրի բաղադրիչի: Այսօր Հայաստան-ԵՄ հարաբերությունները կարգավորվում են հենց այդ պայմանագրով:

Հայաստանի արտաքին քաղաքականությունը Թավշյա հեղափոխությունից հետո

2018 թ. ապրիլ-մայիսյան Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի նոր կառավարությունը հայտարարեց արտաքին քաղաքականության մեջ շարունակականության սկզբունքի կիրառման մասին: Եվ իրոք, Հայաստանի շուրջը ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունները շարունակում են մնալ անփոփոխ, հետևաբար կտրուկ փոփոխություններ արտաքին քաղաքականության մեջ սպասելի չեն: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ Հայաստանին նախկինում գործնականում չի հաջողվել հասնել իր հռչակած «փոխլրացման» կամ «բազմավեկտոր» արտաքին քաղաքականության իրացմանը: Հեղափոխությունից հետո նոր կառավարության հռչակած հայաստանակենտրոնության և ինքնիշխանության կարևորման սկզբունքները ենթադրում են որոշակի հավասարակշռում և մեկ վեկտորից գերկախվածության հաղթահարում:

Հայաստանի ներքաղաքական փոխակերպումները ևս որոշակիորեն ազդում են արտաքին քաղաքականության առկա վիճակի վրա: Օրինակ՝ ներկայումս դրանց ազդեցությունը երևում է հայ-ռուսական հարաբերություններում. սերնդային և աշխարհայացքային տարբերությունները Հայաստանի և Ռուսաստանի կառավարող շրջանակների միջև, նախկին կառավարող շրջանակների հետ ուղղահայաց կապերի կորուստը, միջազգային փոխհարաբերություններում Հայաստանի կողմից իր ինքնիշխանության վարկանիշի վերականգնման դիրքորոշումը նոր գործոններ են առաջ բերել միջպետական հարաբերություններում: Երևանն ու Մոսկվան կարծես նորից սովորում են աշխատել միմյանց հետ:

Մյուս կողմից, թեև Հայաստանի արևմտյան գործընկերները ողջունեցին Թավշյա հեղափոխությունը, սակայն Հայաստանը կարծես չի ստանում նույն ծավալի քաղաքական և ֆինանսական աջակցություն, որքան հետհեղափոխական Վրաստանը և Ուկրաինան էին ստանում: Դրան թերևս առաջին հերթին նպաստում են աշխարհաքաղաքական օբյեկտիվ իրողությունները: Այսպես՝ ԱՄՆ-ի նախագահ Թրամփի վարչակազմի համար ավելի կարևոր են պրագմատիկ առարկայական օգուտներն ու շահերը (այդ առումով Հայաստանը հետաքրքրություն չի ներկայացնում), քան ժողովրդավարության մակարդակը Հայաստանում:

ԵՄ-ում, իրենց հերթին, ավելի շատ կենտրոնացած են միության ներսում և դրա շուրջն ընթացող գործընթացների վրա (ընտրություններ, Բրեքսիթ՝ Եվրամիությունից Մեծ Բրիտանիայի դուրս գալու հարց): Սակայն պատճառներից մեկն էլ թերևս այն է, որ չնայած ժողովրդավար պետություն դառնալու Հայաստանի ներկայացրած հայտին՝ Արևմուտքի տեսանկյունից Հայաստանը շարունակում է լինել Ռուսաստանի «ազդեցության գոտում»: Բրյուսելն ինչ-որ առումով կանգնած է քաղաքական շահերի և իր ընդունած արժեքների միջև երկընտրանքի առջև: Սա ևս նոր իրողություն է բոլորի համար. Երևանը և Բրյուսելը կրկին սովորում են աշխատել միմյանց հետ նոր պայմաններում:

Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ հեղափոխությունից հետո ավելացել է ևս մեկ նոր շեշտադրում. ավելի մեծ առաջնայնություն տալ անմիջական հարևաններ Վրաստանի և

Իրանի հետ հարաբերություններին: Նպատակն է թույլ չտալ, որ երկկողմ հարաբերությունների վրա ազդեցություն գործեն երրորդ պետություններ: Վրաստանի հետ հարաբերություններում այդ երրորդ կողմը կարող են հավասարապես լինել Ռուսաստանը, Թուրքիան և Ադրբեջանը, իսկ Իրանի հետ հարաբերություններում՝ ԱՄՆ-ն:

Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում նոր կառավարությունը շեշտը դնում է Լեռնային Ղարաբաղի՝ բանակցությունների սեղան վերադառնալու անհրաժեշտության վրա և նպատակահարմար չի գտնում քննարկել զիջումների հարցը, քանի դեռ դրանց մասին չի բարձրաձայնել Ադրբեջանը, որը, ըստ էության, կտրականապես դեմ է որևէ զիջման: Ժողովրդավարությունը, կարելի է ասել, հետհեղափոխական Հայաստանի արտաքին քաղաքական բրենդն է: Սակայն Հայաստանը դեռ չի սահմանել իր աշխարհաքաղաքական արժեքը, որն ավելի կարևոր է այսօրվա խիստ ռեալիստական ու արագ փոփոխվող աշխարհակարգում: Ինչպես և նախկինում, այսօր ևս Հայաստանի արտաքին քաղաքականության թիվ մեկ խնդիրը աշխարհաքաղաքական փոքր կշռի բարդույթն է, որի հաղթահարման համար անհրաժեշտ են անսովոր լուծումներ սովորական խնդիրներին:

Լրացուցիչ ընթերցանության համար

Alla Mirzoyan, *Armenia, the Regional Powers, and the West: Between History and Geopolitics*, New York: Palgrave Macmillan, 2010.

Anahit Shirinyan, *Armenia's Foreign Policy Balancing in an Age of Uncertainty*, Research Paper, London: Royal Institute of International Affairs, March 2019,

<https://www.chathamhouse.org/sites/default/files/2019-03-14-Armenia3.pdf>

Թաթուլ Հակոբյան, *Կանաչ ու սև: Արցախյան օրագիր*, Երևան, «Անտարես», 2011:

Թաթուլ Հակոբյան, *Հայացք Արարատից: Հայերը և թուրքերը: Պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն*, Երևան, «Անտարես», 2012:

Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի փաստաթղթեր

Փաթեթային տարբերակ. <http://theanalyticon.com/?p=7893>

Փուլային տարբերակ. <http://theanalyticon.com/?p=7890>

Ընդհանուր պետություն. <http://theanalyticon.com/?p=7886>

Քի Վեսթ. www.civilnet.am/news/2019/06/04/Մեղրի-Լաչին-Շուշի-Քի-Վեսթի-միջանցքները/362037

Մադրիդյան սկզբունքներ. <https://www.aniarc.am/2019/01/25/madrid-principals-armenian-text/>

2. Ազգային անվտանգության և անվտանգության հաստատությունների բարեփոխումների ռազմավարություն

Մոսի Թաթիկյան

Ներածություն

Հայաստանի Հանրապետության հանրային կառավարման քաղաքականության կարևորագույն բաղադրիչ է հանդիսանում արտաքին և ներքին անվտանգության ապահովման անհրաժեշտությունը: Այն ապահովելու համար պետք է մշակվի ազգային անվտանգության նոր ռազմավարություն, և իրականացվեն անվտանգության ուժերի, ծառայությունների և նրանց կառավարման ինստիտուտների բարեփոխումներ: Հայաստանի անվտանգության ռազմավարությունը կարևոր է ոչ միայն երկրի պաշտպանության, այլև տնտեսության և այլ ոլորտների զարգացման անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու համար: Չնայած հասարակական անվտանգության հարաբերական կայունությանը՝ Հայաստանն այն հազվագյուտ երկրներից է, որն ունի կոնվենցիոնալ պաշտպանական վտանգ: Պետության անվտանգության ինստիտուտները կոչված են ապահովելու երկրի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը և պետականության պաշտպանությունը: Ժամանակի հրամայականին համահունչ՝ դրանք պարտավոր են ապահովել նաև քաղաքացիների հավաքական և անհատական անվտանգությունը:

Ընդ որում՝ անվտանգության համալիր ապահովումը պետք է իրականացվի իրավունքի գերակայության և մարդու իրավունքների միջազգային նորմերին և ազգային կարիքներին համապատասխան: Եթե նախկինում «անվտանգություն» ասելով հասկացվում էր հիմնականում պետական ու ռազմական անվտանգություն, ապա վերջին տասնամյակներում առաջնահերթ է դարձել թե՛ հասարակության և թե՛ անհատի անվտանգության ապահովումը: Հայաստանի բյուջեի նշանակալից մասը հատկացվում է արտաքին և ներքին անվտանգությանը՝ հոգալով մեծաթիվ բանակի և ոստիկանության ծախսերը, խթանելով ռազմարդյունաբերությունը, այլ երկրներից գնելով զինատեսակներ, իրականացնելով անվտանգության համակարգի սպաների և ծառայողների վերապատրաստում և այդ ուժերի ու ծառայությունների համար ապահովելով ենթակառուցյուններ, անհրաժեշտ ծառայության պայմաններ և տեխնիկական հագեցվածություն: Դրանով հանդերձ՝ միաժամանակ հարկավոր է պահպանել այդ ոլորտներին հատկացվող բյուջեի հավասարակշռությունը մյուս ոլորտների նկատմամբ, որպեսզի այն համապատասխանի միջազգային պարտավորություններով սահմանված չափանիշներին, և խիստ չկրճատվի այլ ոլորտներին, օրինակ՝ տնտեսությանն ու կրթությանը հատկացված բյուջեն:

Պետական մարմիններն ազգային անվտանգության ռազմավարության մշակման աշխատանքներում այս կամ այն չափով ներգրավում են նաև քաղաքացիական հասարակությանը: Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատվել է 2007 թ.: Ներկայիս աշխարհաքաղաքական մարտահրավերների համատեքստում այն այլևս արդիական չէ: Հետհեղափոխական նոր կառավարությունը սկսեց դիտարկել անվտանգային ռազմավարության նոր հայեցակարգ մշակելու հարցը: Մոսի թվականի մարտին Անվտանգության խորհրդի աշխատակազմը սկսեց աշխատանքները նոր ռազմավարության նախագծի մշակման ուղղությամբ, և ակնհայտ է, որ աշխատանքները համակարգող

Խորհուրդը մտադիր է ապահովել քաղաքացիական հասարակության լայն շերտերի մասնակցությունը համապատասխան քննարկումներում:

Անվտանգության ուժերը, ծառայությունները և դրանք կառավարող ու վերահսկող մարմիններն ու գերատեսչությունները կարևորագույն տեղ են զբաղեցնում Հայաստանի պետական կառավարման համակարգում: Դրանց թվին են պատկանում ոչ միայն երկրի պաշտպանությունն իրականացնող բանակը, ներքին անվտանգությունն ապահովող ոստիկանությունը, ազգային անվտանգության ծառայությունը, արտակարգ իրավիճակների ծառայությունները, սահմանապահ ու մաքսային ծառայությունները, այլև դրանք կառավարող և վերահսկող նախարարությունները, խորհրդարանական հանձնաժողովները, տեսչությունները, Անվտանգության խորհուրդը և վերջապես՝ պետության բարձրագույն ղեկավարությունը:

Սովորաբար անցումային փուլում գտնվող երկրներում առաջնահերթ է դառնում անվտանգության համակարգի համապարփակ բարեփոխումների հարցը: Թավշյա հեղափոխությանը հաջորդած ամբողջ ժամանակաշրջանում դեռևս հայտարարվել է միայն դատաիրավական բարեփոխումների անհրաժեշտության մասին: Պաշտպանության նախարարը հրապարակել է երկրի պաշտպանության վերաբերյալ պետական մոտեցումները և իր տեսլականը, որի հիմքով էլ բանակում, ինչպես նաև ոստիկանական համակարգում պարբերաբար իրականացվում են որոշ բարեփոխումներ, սակայն դրանք համապարփակ ռազմավարական բնույթ չեն կրում: 2019 թ. սեպտեմբերին միայն ակնհայտ դարձավ, որ հասունանում է նաև անվտանգության համակարգի համապարփակ բարեփոխումների անհրաժեշտության հարցը: Քաղաքացիական հասարակությունը մեծ դեր ունի այդպիսի բարեփոխումների պահանջ ու օրակարգ ձևավորելու և դրանց իրականացմանը նպաստելու գործում:

Ընդհանրապես ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում վերջին տասնամյակներում անվտանգության կառավարման հարցերում աստիճանաբար մեծանում է քաղաքացիական հասարակության դերակատարումը: Այն պատշաճ ու արդյունավետ իրագործելու համար հասարակական կազմակերպությունները պետք է լավագույնս քաջատեղյակ լինեն անվտանգության քաղաքականության մշակման և անվտանգության համակարգի վերահսկման ու բարեփոխումների մեթոդաբանությանը, միջազգային սկզբունքներին ու նորմերին, ինչպես նաև ազգային առանձնահատկություններին ու պահանջներին:

Գլուխ 1. Ազգային անվտանգության նորմատիվ փաստաթղթեր
(այսուհետ՝ նորմատիվ շրջանակ)

«Անվտանգություն» հասկացության զարգացման ընթացքը և բաղադրիչ տարրերը

«Անվտանգություն» հասկացության բովանդակային իմաստը վերջին տասնամյակներում շարունակաբար զարգացում է ապրում՝ ընդլայնվելով և խորանալով: «Անվտանգության» հայեցակարգը ավանդաբար դիտարկվում էր որպես պետականակենտրոն՝ իր հիմքում ունենալով ռազմական սպառնալիքներից պետությունների պաշտպանության գաղափարը: Սակայն սառը պատերազմի ավարտից հետո (1946-1980-ական թվականների կեսը ընդունված

է անվանել Արևմուտք/ԱՄՆ-ԽՍՀՄ դիմակայության կամ Սառը պատերազմի շրջան) շեշտադրումն աստիճանաբար տեղափոխվեց դեպի առավել մարդակենտրոն անվտանգություն: Դրանից է բխում նաև անվտանգության սպառնալիքների առավել լայն շրջանակի գնահատման անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով պետություններից ակնկալվում է ոչ միայն դասական ռազմական սպառնալիքներից պաշտպանության ստանձնումը, այլև մարդկանց հավաքական և անհատական անվտանգության կարիքները հոգալու բարդ խնդրի լուծումը:

Ներկայումս միջազգային կազմակերպությունները կարևորում են անվտանգության, դրա զարգացման և մարդու իրավունքների սերտ կապը՝ որպես խաղաղության ապահովման կարևոր նախապայման: Ինչպես 2000 թ. նշել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Քոֆի Անանը. «Դուք չեք կարող ունենալ խաղաղություն առանց անվտանգության, և դուք չեք կարող ունենալ անվտանգություն առանց ներառական զարգացման»: Մեկ այլ ելույթում նա նշել է. «Մարդկային անվտանգությունը ներառում է մարդու իրավունքները, լավ կառավարումը, կրթությունից և առողջապահությունից օգտվելու իրավունքը և յուրաքանչյուր անհատի կողմից իր պոտենցիալը բացահայտելու հնարավորությունների և ընտրության երաշխիքը: Այդ ուղղությամբ ամեն մի քայլ ուղղված է նաև կրճատելու աղքատությունը, հասնելու տնտեսական աճի և կանխարգելելու հակամարտությունները»⁶:

Նախկինում «ազգային անվտանգություն»-ը և «մարդու իրավունքներ»-ը համարվում էին միմյանց ինչ-որ առումով հակասող հասկացություններ: Այսօր արդեն պետությունը պարտավոր է ազգային անվտանգության ապահովումն իրականացնել մարդու իրավունքների և իրավունքի գերակայության միջազգային չափանիշներին համապատասխան: Ընդ որում՝ պետությունը պարտավորվում է ապահովել ոչ միայն քաղաքացիների կյանքի, խոշտանգումներից և նսեմացնող վերաբերմունքից զերծ ապրելու իրավունքը, այլև նրանց կողմից իրենց քաղաքական, քաղաքացիական, սոցիալական ու տնտեսական իրավունքներն իրագործելու համար անվտանգ պայմանների ստեղծումը:

Այսպիսով՝ անվտանգության ժամանակակից սահմանումը ներառում է հետևյալ քայլերը.

- Պետության սահմանների պաշտպանությունը, տարածքային ամբողջականության, անկախության և ինքնիշխանության երաշխավորումը
- Պետության և ժողովրդի պաշտպանությունը արտաքին և ներքին ահաբեկչությունից
- Պետական ինստիտուտների և պետության ունեցվածքի պահպանությունը
- Հասարակական կարգի պահպանությունը
- Մարդկանց հավաքական անվտանգության ապահովումը
- Երկրի քաղաքացիների և օտարերկրյա այցելուների անվտանգության ապահովումը՝ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության նորմերին համապատասխան


⁶ SSR in a Nutshell. Manual For Introductory Training On Security Sector Reform. DCAF - Geneva Centre for Security Sector Governance.

<https://issat.dcaf.ch/download/2970/25352/ISSAT%20LEVEL%201%20TRAINING%20MANUAL%20-%20SSR%20IN%20A%20NUTSHELL%20-%20205.3.pdf>

Ներկայումս անվտանգության այս ընդլայնված ու խոր հասկացությունն էլ հաշվի է առնվում թե՛ համապատասխան ազգային և թե՛ միջազգային նորմատիվ իրավական փաստաթղթերի շրջանակի սահմանման և մշակման ընթացքում:

Ազգային անվտանգության նորմատիվ իրավական շրջանակի մաս կազմող փաստաթղթերի տեսակները և զարգացման ընթացքը:

Ազգային անվտանգության նորմատիվ իրավական շրջանակը կարող է ներառել մի քանի մակարդակի փաստաթղթեր, ինչպիսիք են.



Մակարդակ առաջին. ազգային անվտանգության տեսլական

- Ազգային անվտանգության քաղաքականություն կամ հայեցակարգ
- Ազգային անվտանգության ռազմավարություն

ա) Տեսլականը պետք է լինի համառոտ, ընդհանուր բնույթի ու երկարաժամկետ: Այն պետք է սահմանի որևէ ոլորտում ցանկալի վիճակի վերաբերյալ երկարաժամկետ այնպիսի պատկերացում, որը կապահովի նոր որակ ու կլինի ավելի հավանոտ, քան ներկայիս անմիջական իրավիճակն է: Տեսլականը կարող է լինել առանձին փաստաթղթի ձևով, բայց սովորաբար այն լինում է մշակվելիք քաղաքականության կամ ռազմավարության առաջին մասերից մեկը:

Եթե տեսլականի և իրականության միջև անջրպետն անհաղթահարելի է, ապա բարդանում են ռազմավարության և ճանապարհային քարտեզի մշակումն ու իրագործումը: Ավելին՝ այն կարող է ծնել ոչ իրատեսական ակնկալիքներ, իսկ չիրականանալու դեպքում հանգեցնել

հիասթափության և որոշ ժամանակ անց այլևս արժանահավատ չընկալվել: Լավագույն տեսլականն անգամ արժեզրկվում է առանց ռազմավարության և ճանապարհային քարտեզի⁷:

բ) Քաղաքականությունը կամ հայեցակարգը, ըստ էության, նույն փաստաթուղթն են՝ տարբեր անվանումներով: Դրանք հիմնականում բաղկացած են լինում հետևյալ մասերից. տեսլական, ազգային արժեքներ և շահեր, նպատակներ, առաջնայնություններ և սկզբունքներ, անվտանգության կառավարման սկզբունքներ, անվտանգության սպառնալիքներ և հնարավորություններ, անցյալից քաղած դասեր, անվտանգության ներքին քաղաքական, իրավական, սոցիալական և տնտեսական միջավայր, ազգային անվտանգության առաջնայնություններ, քաղաքականության վերանայման մեխանիզմ⁸:

գ) Ռազմավարությունն այդ երկու տեսակի փաստաթղթերից տարբերվում է նրանով, որ ոչ միայն ներառում է քաղաքականության բաղադրիչները, այլև ուրվագծում է նպատակներին ու առաջնայնություններին հասնելու, մարտահրավերներին հակազդելու և հնարավորություններն օգտագործելու ճանապարհային քարտեզը՝ միաժամանակ դիտարկելով այլ ոլորտների փոխկապակցվածությունը:

Ռազմավարությամբ պետք է կանխատեսվի անկանխատեսելին, գնահատվեն ոչ միայն նախկինում արդեն տեղի ունեցած սպառնալիքներն ու գնահատվեն մարտահրավերները ոչ միայն անցյալում արդեն տեղի ունեցածի, այլև նախանշվեն և հաշվի առնվեն ապագայում սպասվելիք նոր ռիսկերը: Նման մոտեցումը նպատակ ունի բարձրացնելու պետության ամրությունը, դիմացկունությունը, անսպասելի իրադարձությունների դեպքում արագ արձագանքելու և ճգնաժամերն արագորեն հաղթահարելու ունակությունները: Պատմությունն ու ռազմավարական միջավայրը վերլուծելիս կարևոր է ոչ թե սահմանափակվել դաշնակցի ու թշնամու, հերոսի ու հակահերոսի, զոհի ու քաղաքական նոխազի արմատացած պատկերացումների նեղ շրջանակով, այլ կատարել անցյալի քննադատական վերլուծություն, համապատասխան դասեր քաղել գործած սխալներից և հարկ եղած դեպքում նոր մոտեցումներ ձևավորել: Այս ամենն ապահովելու համար համապատասխան խորհրդակցությունների ընթացքում անչափ կարևոր են անկեղծ քննարկումների խրախուսումը և դժվարին հարցերի ու տարակարծությունների վերաբերյալ մտազրոհների ու բանավեճերի անցկացումը⁹:

Ռազմավարությունը պետք է հավասարակշռության հասնի պետության ու ժողովրդի անմիջական կարիքներն ու առաջնահերթ խնդիրները հոգալու, երկարաժամկետ արմատական բարեփոխումներ իրականացնելու ուղիները սահմանելու, ինչպես նաև հեռահար տեսլական ձևակերպելու հարցերում: Որքան նպատակները հեռահար են լինում, այնքան դժվար է լինում ապահովել նրանց իրատեսականությունը՝ պայմանավորված արագորեն փոփոխվող և անկանխատեսելի գլոբալ (համընդհանուր) իրավիճակներով:

⁷ Հայաստանում հանրային կառավարման համակարգում առկա խնդիրները, <https://www.aravot.am/2019/08/13/1059989/>

⁸ UN Security Sector Reform Integrated Technical Guidance Notes.

United Nations Support to National Security Policy-and Strategy-Making Processes.

⁹ Հայաստանում հանրային կառավարման համակարգում առկա խնդիրները, <https://www.aravot.am/2019/08/13/1059989/>

Հետևաբար հեռահար նպատակները չպետք է պարունակեն խիստ առանձնահատուկ ու հատկապես թվային թիրախներ: Ցանկալի է ռազմավարության համար սահմանել ոչ միայն հեռահար, այլև կարճաժամկետ և միջնաժամկետ նպատակներ՝ վերջիններիս համար ուրվագծելով ճանապարհային քարտեզ: Ընթացիկ նպատակադրումների համար ռազմավարությանը փոխարինում է ծրագիրը, որն ուրվագծում է առավել որոշակի գործողություններ և պարունակում է թվային թիրախներ: Նման դեպքերում ծրագիրը լինում է ոլորտային¹⁰:

Սովորաբար պետություններն առաջին մակարդակի մի քանի ձևաչափի փաստաթղթերից ընտրում են մեկը: Դժվար է գտնել որևէ երկիր, որ մշակի թե՛ անվտանգության քաղաքականություն կամ հայեցակարգ և թե՛ ռազմավարություն, քանի որ այդ ձևաչափերի միջև առկա տարբերությունները հաճախ հստակ չեն և դրանք մշակողների շրջանում շփոթության տեղիք են տալիս:

Այս մակարդակի փաստաթղթերը ստեղծվում են երկարաժամկետ կտրվածքով և սովորաբար վերանայվում են յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Ավելի հաճախ դրանք վերանայվում են երկրի ներսում կամ նրա տարածաշրջանային և գլոբալ միջավայրում տեղի ունեցած նշանակալից իրադարձություններից հետո (իշխանափոխություն, հակամարտություն, խաղաղության համաձայնագրի կնքում): Արդյունքում այդ փաստաթղթերն արտացոլում են խզումն անցյալից և անցումը նոր համակարգին կամ իրավիճակին և միաժամանակ օրինականացնում իրենց օրակարգը ներքին և միջազգային հանրության համար:

Հաջորդ մակարդակի փաստաթղթերը հետևյալն են.

- Անվտանգության հաստատությունների բարեփոխումների համապարփակ ռազմավարություն կամ ծրագիր
- Անվտանգության այլ՝ լայն իմաստով ոլորտների փաստաթղթեր, օրինակ՝ արտաքին քաղաքականության հայեցակարգ, էներգետիկ անվտանգության ռազմավարություն և այլն
- Ոլորտային ռազմավարություններ կամ գործողությունների ծրագիր. պաշտպանության, ներքին անվտանգության, ոստիկանության, քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների կառավարման, հետախուզական ծառայությունների, խորհրդարանական վերահսկողության:

Այս մակարդակի փաստաթղթերը սովորաբար մշակվում կամ ստեղծվում են առաջիկա հինգ տարվա համար: Դրանցում կարող են կրկնվել առաջին մակարդակի փաստաթղթերի որոշ տարրեր՝ փաստաթղթերը սահմանափակելով համապատասխան ոլորտներով, և պարունակել հետևյալ բաղադրիչները. իրենց ոլորտների ինստիտուցիոնալ կառույցների ռիսկերի գնահատում, այդ կառույցների գնահատում, սահմանված առաջնահերթություններին հասնելու ուղղությամբ առաջարկվող գործողությունների ճանապարհային քարտեզ կամ ծրագիր:

¹⁰ Հայաստանում հանրային կառավարման համակարգում առկա խնդիրները, <https://www.aravot.am/2019/08/13/1059989/>

Եթե առաջին մակարդակի ռազմավարությունն առաջնայնություններին հասնելու ուղիները սահմանում էր ընդհանուր գծերով, ապա այս մակարդակում կարևոր է մատնանշել որոշակի և առարկայական գործողությունների ծրագիր, դրա իրագործման ճանապարհները, կարողություններն ու ռեսուրսները, ժամկետները, պատասխանատու գերատեսչությունները և նրանց համագործակցության, ինչպես նաև փաստաթղթի իրագործման, մոնիտորինգի, գնահատման և համակարգման գործիքակազմերը:

Անցումային (ներառյալ հետհեղափոխական) շրջանում ռազմավարության մշակումը ավելի դժվար է լինում, քան սովորական իրավիճակում, քանի որ համընդհանուր ոգևորությունն ուղեկցվում է մեծ ակնկալիքներով և դառնում փորձություն իշխանությունների համար. վերջիններս պետք է ապացուցեն, որ իրենք պարտավորված են և ունակ՝ պահպանելու նախորդների ձեռքբերումները և միաժամանակ իրականացնելու ոչ թե մակերեսային ու դեկորատիվ փոփոխություններ, այլ իրական և արմատական բարեփոխումներ¹¹:

Ազգային անվտանգության նորմատիվ շրջանակի մշակման մեթոդաբանությունը

Ազգային անվտանգության նորմատիվ իրավական փաստաթղթերի մշակման համար անչափ կարևոր է գործընթացի ճիշտ կազմակերպումը: Ցանկացած ռազմավարության մշակման համար կարևոր են թե՛ այն մշակող թիմի ճիշտ ձևավորումը և թե՛ հանրության հետ համապատասխան խորհրդակցությունների կամ քննարկումների անցկացումը: Առաջինի դեպքում անհրաժեշտ է թիմում ներգրավել որոշակի հմտություններ ունեցող մարդկանց, իսկ երկրորդի դեպքում ճիշտ սահմանել, թե հասարակության որ շերտերն են ներգրավվելու քննարկումներում: Բնականաբար ռազմավարություն մշակող հիմնական թիմում պետք է ներգրավվեն համապատասխան հաստատությունների այն ներկայացուցիչները, որոնք ունեն ինստիտուցիոնալ հիշողություն, իրենց հաստատությունները ներկայացնելու լիազորություն, իրենց ոլորտների վերաբերյալ մասնագիտական խոր գիտելիքներ, վերլուծական և ռազմավարական ծրագրավորման ունակություններ¹²:

Ազգային անվտանգության նորմատիվ շրջանակի մշակումը նախաձեռնում, համակարգում և իրականացնում են պետական իշխանությունները, սակայն այդ գործընթացը չպետք է լինի նրանց մենաշնորհը. նման դեպքերում այդ փաստաթղթերը հաճախ կարող են դառնալ կուսակցական և սպասարկել կառավարող վերնախավին: Դրա համար էլ այն պետք է մշակվի քաղաքացիական հասարակության լայն շերտերի հետ համաձայնության արդյունքում, որպեսզի արտահայտի ազգային շահերը, ժողովրդի և բնակիչների անվտանգության կարիքները: Ազգային անվտանգությանը վերաբերող նորմատիվ փաստաթղթերի մշակումը հետևաբար պետք է կրի ներառական բնույթ, որը ենթադրում է թե՛ երկրում եղած ամբողջ մասնագիտական ներուժի նպատակային օգտագործում և թե՛ հասարակայնության բնեռայնացման վտանգից խուսափում: Չնայած որ երկրի ղեկավարությունը մեծ դեր է խաղում անվտանգության ռազմավարության նպատակների ու առաջնայնությունների ձևավորման գործում, սակայն նույնիսկ դրանք փաստաթղթի այլ բաղադրիչների հետ միասին պետք է ոչ թե

¹¹ Հայաստանում հանրային կառավարման համակարգում առկա խնդիրները, <https://www.aravot.am/2019/08/13/1059989/>

¹² Հայաստանում հանրային կառավարման համակարգում առկա խնդիրները, <https://www.aravot.am/2019/08/13/1059989/>

կանխորոշվեն իշխանությունների կողմից, այլ նախապես առաջարկվեն ռազմավարության ձևավորման կամ մշակման գործընթացում հանրության միջից ներգրավված անձանց կամ ձևավորված աշխատանքային խմբի ուշադրությանը:

Հարկ է նշել, որ պետության անվտանգության ռազմավարության նորմատիվ փաստաթղթերի մշակման շրջանակը առավել ընդգրկուն ներառականություն է ապահովում հատկապես ժողովրդավարական երկրներում: Բացի գործադիր իշխանություններից և անվտանգության կառավարման մարմիններից, գերատեսչություններից, այլ ուժերից ու ծառայություններից՝ այդ շրջանակի մշակմանը ներգրավվում են նաև օրենսդիր իշխանությունները, փորձագիտական և այլ մասնագիտական կառույցների ներկայացուցիչները, քաղաքական կառուցողական ուժերը և քաղաքացիական հասարակության մտավոր ներուժը:

Նորմատիվ փաստաթղթերի մշակման նպատակով սովորաբար ստեղծվում է միջգերատեսչական երկու մակարդակի խումբ: Դրանցից առաջինը ղեկավարների մակարդակն է, որում ներկայացվում են երկրի գործադիր ու օրենսդիր իշխանությունների ղեկավարները, նախարարները, անվտանգության ուժերի և ծառայությունների ղեկավարները, խորհրդարանական վերահսկման հանձնաժողովների անդամներ (փաստաթղթի ուղենիշերը սահմանելու և այն հաստատելու նպատակով): Երկրորդը աշխատանքային խումբն է, որում ընդգրկվում են փաստաթղթերի բուն մշակողները: Փաստաթղթի մշակման գործընթացը սովորաբար համակարգում է համապատասխան գերատեսչությունը: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կա՛մ կարող են ընդգրկված լինել հիմնական աշխատանքային խմբում, կա՛մ էլ նրանց հետ կարող են լինել առանձին քննարկումներ-խորհրդակցություններ՝ նրանց տեսակետները լսելու և առաջարկությունները փաստաթղթում արտացոլելու նպատակով: Միջազգային աջակցություն ստացող զարգացող կամ անցումային երկրներում հաճախ վերոնշյալ խմբերում ընդգրկվում են նաև միջազգային գործընկերների ներկայացուցիչներ և միջազգային փորձագետներ, որոնք հաճախ տեխնիկական աջակցություն են տրամադրում փաստաթղթերը մշակելիս:

Փաստաթղթերի մշակումը ընդհանրապես ենթադրում է երկարատև և աշխատատար գործընթաց, որը ներառում է տարբեր ձևաչափերով հանդիպումներ, քննարկումներ, կլոր սեղաններ: Ցանկալի է քննարկումներ անցկացնել ոչ միայն երկրի մայրաքաղաքում, այլև շրջաններում կամ մարզերում:

Գործընթացն ընդհանուր գծերով կարող է ներառել հետևյալ փուլերը.

Նախաձեռնում

- Որոշել շրջանակն ու մեթոդալոգիան
- Ծավալել հասարակական իրազեկման գործընթաց

Խորհրդակցություններ և նախագծի մշակում

- Ազգային երկխոսություն, վերլուծություն ու իրավիճակի գնահատում
- Սահմանել ձևավորվող արժեքները, շահերն ու նպատակները
- Ձևավորել հանձնախումբ

Նախագծի վերաբերյալ խորհրդակցություններ ու վերանայում

- Շրջանառության մեջ դնել նախագիծը
- Փոխզիջում տարբեր տեսակետների միջև
- Վերանայել և վերջնական տեսքի բերել նախագիծը

Հաստատում ու տարածում

- Գործադիր մարմինների կողմից հավանություն
- Խորհրդարանական քննարկում ու հաստատում
- Հասարակայնության իրազեկում

Փաստաթղթի նախագծի մշակումից հետո հրավիրվում է աշխատանքային լիագումար հանդիպում՝ լսելու և քննարկելու մշակման գործընթացի մեջ ներգրավված բոլոր կողմերի կարծիքները, առաջարկությունները, տեսակետները, դիտարկումներն ու առարկությունները և համապատասխանաբար խմբագրելու նախագիծը: Աշխատանքային մակարդակով փաստաթղթի ամբողջացումից և հավանության արժանանալուց հետո այն վերջնական տեսքով ներկայացվում է գործադիր կամ ղեկավար մակարդակի հաստատմանը: Այնուհետև այն հաստատվում է երկրի, իսկ ոլորտային փաստաթղթերի դեպքում՝ համապատասխան գերատեսչության ղեկավարի կողմից: Ազգային անվտանգության քաղաքականությունը կամ ռազմավարությունը բազմաթիվ երկրներում վերջնական հավանության է արժանանում կամ վավերացվում է խորհրդարանների կողմից, որի ընթացակարգն ամրագրված է գլխավոր օրենքում՝ Սահմանադրության մեջ: Կան նաև երկրներ, որոնք շրջանցում են խորհրդարանը, և այդ փաստաթղթերը հաստատվում են միայն գործադիր իշխանությունների կողմից: Կարևոր է ընդգծել, թե տվյալ երկրում կառավարման որ համակարգն է գործում՝ նախագահակա՞ն, թե՞ խորհրդարանական:

Փաստաթղթի հաստատումից հետո այն ներկայացվում է հանրությանը և լուսաբանվում: Փաստաթղթերի մեծ մասը հիմնականում բաց է լինում հանրության համար, սակայն դրանք կարող են ունենալ նաև գաղտնի տեղեկություններ պարունակող կամ սահմանափակ շրջանակի համար նախատեսված հավելվածներ, որոնք ենթակա չեն հրապարակման ու լայն իրազեկման:

Եվ վերջապես երկրում տարբեր հայեցակարգերի ու ռազմավարությունների մշակումը պետք է համատեղվի միմյանց հետ, ինչպես նաև երկրում ընթացող այլ գործընթացների, օրինակ՝ սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների հետ:

Հայաստանի Հանրապետության 2007 թ. ընդունած ազգային անվտանգության ռազմավարությունը

Հայաստանի Հանրապետության գործող ազգային անվտանգության ռազմավարությունը (ԱԱՌ) մշակվել է 2006 թ. և ընդունվել 2007 թ. հունվարին¹³: Առաջին հայացքից այն պարունակում է պահանջվող հիմնական այն բաղադրիչները, որոնք ԱԱՌ-ն պետք է ունենա: Այն իր բովանդակությամբ չի հակասում միջազգային ընդունված նորմերին: Սակայն փաստաթղթի տարբեր գլուխների միջև չկա հավասարակշռություն, այն բավարար խորքային չէ, առավելապես կրում է դեկլարատիվ բնույթ և հեռու է գործնական կիրառելիությունից: 2007 թ. ԱԱՌ-ի հիմնական բաղադրիչներն են.

¹³ Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին, 2007 թ. փետրվարի 7, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>

1. *Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքները, անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, դրանց դեմ ուղղված սպառնալիքները*
2. Ներքին անվտանգության ռազմավարությունը
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը
4. Արտաքին անվտանգության ռազմավարությունը¹⁴

Փաստաթղթում հռչակված կարևորագույն ուղերձները, արժեքներն ու սկզբունքները ներառում են իրավունքի գերակայությունը, ժողովրդավարությունը, պետական համակարգի արդյունավետ կառավարումը, համապարփակ բարեփոխումների իրագործումը, դատական համակարգի անկախությունն ու անաչառությունը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովումը, հանրային համերաշխության հաստատումը, արդյունավետ միջազգային ներգրավվածությունը, միջազգային հեղինակության ամրապնդումը, էներգետիկ կախվածության հաղթահարումը, սոցիալական արդարության ապահովումը, աղքատության հաղթահարումը և այլն: ԱԱՌ-ի ընդունմանը հաջորդող ավելի քան տասը տարում վերոնշյալ արժեքների և նպատակների մի մասը բավարար չափով չի իրականացվել կամ էլ ոտնահարվել է¹⁵:

ԱԱՌ-ում մատնանշվում են պետության անվտանգության այն սպառնալիքներն ու մարտահրավերները, որոնք ազդում են երկրի պաշտպանության, ներքին անվտանգության, տնտեսության, էներգետիկ, սննդի և տեղեկատվական անվտանգության, ժողովրդագրության, շրջակա միջավայրի պահպանության, գիտության, կրթության և մշակույթի ոլորտների վրա: Միաժամանակ այդ փաստաթուղթը հիշեցնում է ոչ այնքան ռազմավարություն, որքան քաղաքականություն կամ հայեցակարգ. սպառնալիքներին դիմակայելու մատնանշված ուղիներն ունեն ընդհանուր բնույթ, և դրանք առավելապես առաջնահերթությունների սահմանում են հիշեցնում: Փաստաթղթի եզրափակիչ մասում նշված է, որ ԱԱՌ-ի հիմնադրույթները կենսագործվում են Հայաստանի արտաքին քաղաքական, ռազմական, տնտեսական, պարենային, էներգետիկ, բնապահպանական, հաղորդակցական և տեղեկատվական անվտանգության, ժողովրդագրական, գիտակրթական, հոգևոր-մշակութային զարգացումների հայեցակարգերի և դրանցից բխող նպատակային ծրագրերի հիման վրա, որոնք մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը¹⁶:

Ներքին անվտանգության ռազմավարությունն իր հերթին պարունակում է հետևյալ ուղղությունները.

1. Արդյունավետ պետական կառավարում
2. Բանակաշինություն
3. Ազատական տնտեսություն

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Sossi Tatikyan, *On the Use of the Army in Suppressing Protests in Armenia in March 2008*, 12 September 2019, <https://www.evreport.com/opinion/on-the-use-of-the-army-in-suppressing-protests-in-armenia-in-march-2008>

¹⁶ Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին, 2007 թ. փետրվարի 7, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189>

4. Կյանքի նոր որակ և բարոյահոգեբանական մթնոլորտ:

Այս բաղադրիչները թեև անհրաժեշտ, սակայն բավարար և սպառիչ չեն ներքին անվտանգության ապահովման համար, և յուրաքանչյուր ոլորտին վերաբերող անդրադարձը կրում է բավականին հպանցիկ ու մակերեսային բնույթ: Դա վերաբերում է մասնավորապես ներքին բարեփոխումներին, ժողովրդավարությանն ու մարդու իրավունքներին, սոցիալական արդարությանը, աղքատության վերացմանը, էներգետիկ անվտանգությանը: Այնինչ այս ոլորտներում դրական փոփոխությունները չափազանց կարևոր են երկրի ներքին կայունության և սոցիալական բարեկեցության, հետևաբար նաև արտագաղթի կանխման ու ժողովրդագրական վիճակի բարելավման համար՝ որպես երկրի ընդհանուր անվտանգության անհրաժեշտ նախապայմանի:

Արտաքին անվտանգության ռազմավարությունը փաստաթղթի ամենաձավալուն գլուխն է, որում բավականին մանրամասն անդրադարձ կա միջազգային, տարածաշրջանային և Միջուրբի հետ հարաբերություններին: Սա թերևս պայմանավորված է Հայաստանի յուրահատուկ աշխարհագրական դիրքով և դրանցից բխող անվտանգության մարտահրավերներով.

- Չորս հարևաններից երկուսի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությամբ
- Ադրբեջանի կողմից մշտական կոնվենցիոնալ պաշտպանական վտանգով
- Թուրքիայի կողմից հնարավոր ուղղակի կամ անուղղակի վտանգով
- Մյուս երկու հարևանների՝ Վրաստանի ու Իրանի բարդ աշխարհաքաղաքական իրավիճակով
- Տարածաշրջանում Ռուսաստանի Դաշնության, Եվրատլանտյան, Թուրքիայի ու Իրանի շահերի բախմամբ¹⁷:

Չնայած փաստաթղթում մանրամասն անդրադարձ է կատարվել արտաքին անվտանգության ռազմավարությանը, սակայն այդ բաժինը *առավելապես նկարագրական է և ոչ խորքային*: Բացի դրանից՝ ռազմավարության մեջ ներքին և արտաքին քաղաքականության բաղադրիչների միջև անհամաչափությունը աննախադեպ է ու խնդրահարույց հետևյալ պատճառներով.

- Արտաքին քաղաքականությանն առանցքային տեղ հատկացնելը նվազեցնում է երկրի անվտանգության վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդող մյուս ոլորտներում բարեփոխումներ իրագործելու՝ կառավարության պատասխանատվությունը:
- Հռչակված երկու կարևորագույն հիմնահարցերի՝ Արցախյան հակամարտության լուծման և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործում առաջընթաց չի արձանագրվել: Դա կարելի է բացատրել ինչպես Հայաստանի իշխանությունների իրավագործությունից դուրս՝ ադրբեջանական և թուրքական կողմերի բարի կամքի բացակայությամբ, այնպես էլ այդ հարցերում Հայաստանի ռեակցիոն (հնացած, հետադիմական) և պասիվ (կրավորական, ոչ արդյունավետ) քաղաքականությամբ:
- Հայաստանի հռչակված փոխընթացային քաղաքականությունը, որին 2008 թ. նախագահական ընտրություններից և կառավարության փոփոխությունից հետո հաջորդել

¹⁷ Sossi Tatikyan, *On the Elaboration of Armenia's New National Security Strategy*, 8 Aug 2019, <https://www.evnreport.com/raw-unfiltered/on-the-elaboration-of-armenia-s-new-national-security-strategy?fbclid=IwAR07H-rLAAE6ncRhv5GAf1zZWJQVrJe26rYHT6B9OnskY17Ue8H5RmhMd5E>

է բազմավեկտորային քաղաքականությունը, առավելապես ունեցել է դեկլարատիվ բնույթ: Հայաստանը այդպես էլ չի կարողացել հավասարակշռել մի կողմից Ռուսաստանի Դաշնության և Իրանի, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի և Եվրամիության հետ հարաբերությունները, ինչպես թելադրում էին այդ երկու նմանատիպ սկզբունքները¹⁸: Միակ երկիրը, որին Հայաստանը հռչակել է հուսալի դաշնակից, շարունակել է մնալ Ռուսաստանի Դաշնությունը: Միաժամանակ կարևորվել են հարաբերությունները եվրոպական կառույցների, ԱՊՀ-ի, Վրաստանի, Իրանի և ԱՄՆ-ի հետ: Հայաստանն իր անվտանգությունը հիմնականում պայմանավորել է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակներում, թեև այդ գաղափարի մաս է համարվել նաև ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագիրը (1994 թ.), ինչպես նաև համագործակցությունն այլ միջազգային կազմակերպությունների հետ:

Ամեն դեպքում, 12 տարի հետո փաստաթղթի վերանայումն անհրաժեշտություն էր, հատկապես եթե այն դիտարկենք աշխարհում, տարածաշրջանում և Հայաստանում այդ ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների համատեքստում: 2017 թ. վերջին - 2018 թ. սկզբին նախորդ իշխանությունները փորձ արեցին մշակելու Հայաստանի զարգացման նոր ռազմավարություն, որում կար նաև անվտանգությանը վերաբերող հատված:

Ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման գործընթացը

2019 թ. հուլիսին վարչապետ Ն. Փաշինյանի որոշմամբ ստեղծվեց Ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնախումբ, հաստատվեցին հանձնախմբի անհատական կազմը և գործունեության կարգը:

Անվտանգության խորհրդի քարտուղարին հանձնարարվեց ԱԱՌ-ի նախագիծը մեկ տարվա ընթացքում ներկայացնել ՀՀ Անվտանգության խորհրդի (ԱԽ) քննարկմանը, այնուհետև՝ ՀՀ կառավարության հաստատմանը¹⁹: Այն հանգամանքը, որ ԱԱՌ-ի մշակման համար նախատեսվել է մի ամբողջ տարի, նշանակում է նոր կառավարությունը ոչ միայն ցանկություն ունի վերանայելու և թարմացնելու գործող փաստաթուղթը, այլև մտադրություն ունի որակապես նոր փաստաթուղթ ունենալու, որը պետք է կյանքի կոչվի բոլոր շահագրգիռ կողմերի հետ համապարփակ երկխոսության միջոցով:

Հանձնախումբը բաղկացած է ԱԽ քարտուղարից, նախարարներից, Ազգային անվտանգության ծառայության տնօրենից, Զինված ուժերի գլխավոր շտաբի պետից, ոստիկանապետից, ֆինանսական կառույցների ղեկավարներից, Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների և պաշտպանության հանձնախմբերի նախագահներից, ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարից և Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահից: Զուգահեռաբար

¹⁸ Sossi Tatikyan, *On the Elaboration of Armenia's New National Security Strategy*, 8 Aug 2019, <https://www.evnreport.com/raw-unfiltered/on-the-elaboration-of-armenia-s-new-national-security-strategy?fbclid=IwAR07H-rLAAE6ncRhv5GAf1zZWJQVrJe26rYHT6B9OnskY17Ue8H5RmhMd5E>

¹⁹ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշում, 16/07/2019, http://seco.am/information/press_releases/240?lang=hy

փաստաթղթի նախագծի մշակման նպատակով ձևավորվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ:

Անվտանգության խորհրդի աշխատակազմը նախատեսում է փաստաթղթի մշակումն իրականացնել ներառականության սկզբունքով և աշխատանքներում ներգրավել ոչ միայն գործադիր և օրենսդիր իշխանություններին, այլև հասարակական կազմակերպություններին, փորձագիտական համայնքին, խորհրդարանական և արտախորհրդարանական քաղաքական ուժերին՝ կուսակցություններին, հիմնադրամներին: Մտադրություն կա նաև ընդլայնելու գործընթացի մասնակցության աշխարհագրությունը՝ այցելելով Հայաստանի մարզեր և Արցախ՝ տեղում լայն քննարկում-խորհրդակցություններ անցկացնելու նպատակով: ԱԽ-ի աշխատակազմը համապատասխան շրջանակների հետ հանդիպումները սկսել է դեռևս 2019 թ. մարտից:

ԱԱՌ-ն կոչված է բարձրացնելու պետության, հասարակության և միջազգային հանրության միջև փոխվստահության աստիճանը: Ընտրված ձևաչափը աննախադեպ ներառական է, որը հազվադեպ է կիրառվել որևէ երկրում և արդյունավետ իրականացնելու դեպքում կարող է օրինակելի մոդել դառնալ ժողովրդավարության ճանապարհն անցնող այլ երկրների համար: Նմանատիպ գործընթացներում քաղաքացիական հասարակությանը ներառելը արդեն պարտադիր է դարձել ժողովրդավարական երկրներում, իսկ վերոնշյալ մյուս շրջանակների ներգրավումը կամ դրա աստիճանը տարբեր երկրներում տարբեր է: Մյուս կողմից, ընդգրկուն և ներառական մոտեցումը պարունակում է որոշակի վտանգներ, օրինակ՝ ռազմավարության հիմնական դրույթների վերաբերյալ փոխզիջումային մոտեցումների հասնելու դժվարությունը, ներգրավված շրջանակների կարծիքների անբավարար արտացոլումը և դրանից բխող հիասթափությունը, խորհրդակցությունների աշխատատար, ժամանակատար ու դժվարկառավարելի լինելը: Հետևաբար կարևոր են այս գործում ներգրավված շրջանակների՝ գերատեսչական, կուսակցական և խմբակային շահերից հրաժարումը, ազգային և պետական շահով առաջնորդվելը, համագործակցությունն ու փոխըմբռնումը փաստաթուղթը մշակող աշխատանքային խմբի հետ: Թեև գործընթացի ներառականությունը կարևոր է, սակայն չպետք է մոռանալ, որ դրանում մարզինալ (փոքրամասնությունները կապող) կամ արմատական քաղաքական ուժերի ներառումը կարող է խոչընդոտել փաստաթղթի բովանդակության վերաբերյալ փոխհամաձայնության հասնելը:

2007 թ. ի վեր միջազգային, տարածաշրջանային և ազգային անվտանգային միջավայրը ենթարկվել է մեծ փոփոխությունների: Ինչպես նշեցինք վերևում, «անվտանգություն» հասկացության շրջանակը գնալով ընդլայնվում է՝ ընդգրկելով ոչ միայն պետական և ռազմական անվտանգության, այլև մարդկային անվտանգությունը, այդ թվում՝ զարգացմանն ու մարդու իրավունքներին առնչվող ասպեկտները: Այսօր արդեն լայնորեն ընդունվում է, որ չկա անվտանգություն առանց զարգացման, և չկա զարգացում առանց անվտանգության: Եթե նախկինում միտում կար սահմանափակելու մարդու իրավունքները անվտանգությունը ապահովելու նպատակով, ապա ներկայումս մարդու իրավունքների ոտնահարումը համարվում է անվտանգությանն ուղղված սպառնալիք²⁰:

²⁰ Sossi Tatikyan, *On the Elaboration of Armenia's New National Security Strategy*, 8 Aug 2019, <https://www.evnreport.com/raw-unfiltered/on-the-elaboration-of-armenia-s-new-national-security-strategy?fbclid=IwAR07H-rLAAE6ncRhhv5GAf1zZWJQVrJe26rYHT6B9OnskY17Ue8H5RmhMd5E>

Աշխարհաքաղաքական առումով վերջին շրջանում տեղի են ունենում գլոբալ փոփոխություններ, որոնք առավել հրատապ են դարձնում անվտանգության նոր ռազմավարության մշակման անհրաժեշտությունը: Ուկրաինայի և Վրաստանի իրադարձություններից հետո Ռուսաստանի ու Արևմուտքի միջև լարվածությունը վերականգնվել ու խորացել է. այն հիշեցնում է սառը պատերազմի ժամանակները:

Իսլամական պետության ստեղծմամբ ու պարտությամբ և Միքիայի պատերազմի ծավալմամբ առավել բարդացել է իրավիճակը Մերձավոր և Միջին Արևելքում, որի հետևանքով փոխվել է նաև ահաբեկչության բնույթը: Եվրոպայում աճել են անօրինական կամ օրինական միգրացիայի (մարդկանց տեղաշարժ, որն ուղեկցվում է ժամանակավոր կամ մշտական բնակության վայրի փոփոխմամբ) ծավալները, և խորացել են Եվրամիություն-Միացյալ Թագավորություն (ՄԹ) հարաբերություններում Բրեքզիթի (Եվրամիությունից Միացյալ Թագավորության դուրս գալու՝ ՄԹ-ում անցկացված հանրաքվեի արդյունքում 2015 թ. իշխանությունների կողմից հայտարարված մտադրության շուրջ ընթացող գործընթացի) հետ կապված ճգնաժամերը: Ստորագրվել, սակայն ժամանակի փորձությանը չի դիմացել Իրանի հետ 2015 թ. կնքված միջուկային գործարքը, և ԱՄՆ-ը կրկին սկսել է պատժամիջոցներ կիրառել Իրանի նկատմամբ: Մովորական են դարձել կիբերանվտանգության, տեղեկատվական ու հիբրիդային (խառնուրդային) պատերազմների վտանգները:

Տարածաշրջանային մակարդակով. տեղի ունեցավ ռուս-վրացական պատերազմը (2008 թ., հայտնի է նաև «օգոստոսյան պատերազմ» անվանումով), 2013 թ. ստեղծվեց սկզբում Մաքսային, այնուհետև Եվրասիական տնտեսական միությունը, և Հայաստանը դարձավ այդ կառույցի անդամը, որի պատճառով էլ ձախողվեց Եվրամիության հետ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրումը (նաև՝ Ասոցացման համաձայնագիր): Տարիներ անց՝ 2017 թ., Հայաստանը Եվրամիության հետ կնքեց Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր՝ որպես այլընտրանք ձախողված Ասոցացման համաձայնագրին, բայց առանց ազատ առևտրի բաղադրիչի:²¹

Միաժամանակ, որևէ առաջընթաց չի արձանագրվել Արցախի հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում: Նման իրավիճակում Հայաստանը կանգնած է երկրնտրանքի առաջ. կա՛մ պետք է պահպանի առկա ստատուս-քվոն, կա՛մ էլ այդ հիմնահարցերում պետականամետ ու ազգանպաստ նոր ու թարմ մոտեցումներ ձևավորի:

Ազգային մակարդակով. 2016 թ. ապրիլին Արցախը Ադրբեջանի կողմից ենթարկվեց լայնածավալ ռազմական ագրեսիայի, և զինադադարի ռեժիմի խախտումներն ու Ադրբեջանի ռազմատենչ քարոզչությունն ուժգնացան: Հայաստանի ներքաղաքական կյանքում տեղի ունեցավ փոքրածավալ զինված ապստամբության փորձ «Մասնա ծոեր» խմբավորման կողմից: Վերջապես՝ 2018 թ. ապրիլ-մայիսին, Թավշյա հեղափոխության միջոցով տեղի ունեցավ ոչ բռնի, խաղաղ իշխանափոխություն, որին հետևեց անցումային ժամանակաշրջանը:²² Տասներկու տարի շարունակ դեկլարատիվ ԱԱՌ-ն չթարմացնելը, քաղաքական կամքի բացակայությունը Հայաստանի հանրային կառավարման համակարգում ռազմավարական

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

ծրագրավորման բացակայության և իշխանության լճացման վկայություններից են:²³ Միաժամանակ, Թավշյա հեղափոխությունից ավելի քան մեկ տարի հետո նոր ԱԱՌ-ի մշակմանն անդրադառնալու ժամանակը ճիշտ է ընտրված: Թեև այն ավելի վաղ էր սպասվում, սակայն հեղափոխությունից անմիջապես հետո տիրող համատարած ոգևորությունը (Էյֆորիան) կարող էր հանգեցնել ոչ իրատեսական մոտեցումների և ռազմավարության, իսկ մեկ տարի անց և՛ իշխանությունները, և՛ հասարակությունը ավելի սթափ ու իրատեսական են գնահատում տիրող իրավիճակը և մոտ ապագայի համար կանխատեսումները²⁴:

Վարչապետ Ն. Փաշինյանը ՀՀ պաշտպանության նախարարությունում ունեցած ելույթում, վկայակոչելով չինական մարտական ռազմավարությունը (ստրատեգիա), արձանագրել է. «Տաղանդավոր գեներալները հաղթում են առանց պատերազմի: Սա մեր ռազմավարական տեսլականն է»²⁵: ԱԱՌ-ն պետք է խոր անդրադարձ կատարի ոչ միայն արտաքին պաշտպանությանը, հանրային անվտանգությանը և արտաքին քաղաքականությանը, այլև ժողովրդագրությանը, էներգետիկ անվտանգությանը, շրջակա միջավայրի պահպանությանը, կառավարմանը, արդարադատությանը, մարդու իրավունքներին, տնտեսությանը, առողջապահությանը, կրթությանը այնքանով, որքանով դրանք ազդում են երկրի և նրա քաղաքացիների անվտանգության վրա: Հետևաբար այն պետք է դուրս գա ոլորտային և գերատեսչական սահմաններից և բացահայտի դրանց փոխկապակցվածությունը և բազմաշերտ հարցերը:

Օրինակ՝ մարդու իրավունքների ոտնահարումը, արդարադատության համակարգի հանդեպ վստահության բացակայությունը, սոցիալական անարդարությունն ու աղքատությունը կարող են հանգեցնել քաղաքացիական անհնազանդության, որն էլ կարող է հանգեցնել իշխանափոխության, կամ արտագաղթը կարող է փոխել երկրի ժողովրդագրությունը, որն էլ կարող է հանգեցնել երկրի բնակչության նվազման, որոշ բնակավայրերի դատարկման և բնակիչ հզորության թուլացման: Էներգիայի աղբյուրների բազմազանության բացակայությունը և չափից ավելի մեծ կախվածությունը էներգիայի մի տեսակի բնական ռեսուրսից կամ էներգետիկայի բնագավառում մի գործընկերոջից կարող են հանգեցնել ոչ միայն էներգիայի մատակարարման համակարգային խափանումների (ինչին ականատես եղանք վերջերս), այլև երկրի իշխանությունների կողմից որոշումների ընդունման ինքնիշխանության սահմանափակման: Կանանց դեմ բռնությունն ու խտրականությունը ոչ միայն մարդու իրավունքների և մարդկանց անվտանգության խնդիր են, այլև հանգեցնում են սեռով պայմանավորված հղիության ընդհատումների, ինչն էլ կարող է հանգեցնել ժողովրդագրական սեռային հավասարակշռության խախտման՝ դրանից բխող հետևանքներով: Այստեղից հետևություն. մի կողմից՝ ազգային ինքնության պահպանման, Հայաստանի ու Արցախի միջև միասնության, Միյուռքում հայապահմանման և մյուս կողմից՝ համամարդկային զարգացող արժեքների, մոդեռնիզացիայի (արդիականացում) և

²³ Հայաստանում հանրային կառավարման համակարգում առկա խնդիրները, <https://www.aravot.am/2019/08/13/1059989/>

²⁴ Sossi Tatikyan, *On the Elaboration of Armenia's New National Security Strategy*, 8 Aug 2019, <https://www.evnreport.com/raw-unfiltered/on-the-elaboration-of-armenia-s-new-national-security-strategy?fbclid=IwAR07H-rLAAE6ncRhv5GAf1zZWJQVrJe26rYHT6B9OnskY17Ue8H5RmhMd5E>

²⁵ Տաղանդավոր գեներալները հաղթում են առանց պատերազմի. Նիկոլ Փաշինյան, հուլիսի 22, 2019, <http://politik.am/taxandavor-generalnery-haxtum-en-aranc-paterazmi-nikol-pashinyan>

գլոբալիզացիայի (համաշխարհայնացում) ժամանակներում նորարարության ինտեգրման միջև հավասարակշռությունը մեկ այլ մարտահրավեր ու միաժամանակ հնարավորություն է²⁶:

Հայաստանի իշխանություններն ընտրել են ոչ թե Ազգային անվտանգության քաղաքականության կամ հայեցակարգի, այլ ռազմավարության մշակման ավելի նախընտրելի ձևաչափը: Սակայն կարևոր է, որ փաստաթուղթն այդպիսին հանդիսանա ոչ միայն անվանումով, այլև համապատասխանի այդ ձևաչափի պահանջներին ու բովանդակությանը և ընկալվի ոչ թե որպես պարզապես ներքին կամ արտաքին սպառման համար անհրաժեշտ ձևականություն, այլ իրագործելի ռազմավարություն: Նույնիսկ լավագույն տեսլականն ու քաղաքականությունը արժեզրկվում են, երբ չեն ուղեկցվում ռազմավարական ճանապարհային քարտեզով և չեն կենսագործվում: Այդ դեպքում այն արժանահավատ չի համարվի, կամ էլ կստեղծվեն ոչ իրատեսական սպասումներ, որը հատկապես ռիսկային կլինի հետհեղափոխական, անցումային ժամանակաշրջանում, երբ հանրությունը ակնկալում է արմատական ինստիտուցիոնալ և տնտեսական բարեփոխումներ՝ շոշափելի արդյունքներով²⁷: Ինչպես նշել է ԱԽ քարտուղարը. «[...]մեզ անհրաժեշտ է ձևավորել մի այնպիսի փաստաթուղթ, որը կլինի ճկուն, կարձանագրի և կարձագանքի մեր երկրում, տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին և զարգացումներին»²⁸:

ԱԱՌ-ն չպետք է դիտարկվի որպես առանձին փաստաթուղթ, այլ պետք է սերտորեն կապված և ներդաշնակեցված լինի «Հայաստանի փոխակերպման ռազմավարություն 2050» փաստաթղթի հետ, որը մշակվում է վարչապետի աշխատակազմում: Անվտանգության ոլորտային ծրագրերը պետք է համաձայնեցվեն նաև ոլորտային զարգացման ռազմավարությունների հետ ՄԱԿ-ի կողմից 2016 թվականի հունվարի 1-ին ընդունած «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ով սահմանված կայուն զարգացման 17 նպատակներին համահունչ: Կարևոր է նաև տարբեր ոլորտներին հատկացվող պետական բյուջետային ծախսերի հավասարակշռությունը: Պաշտպանության և ներքին անվտանգային համակարգերին հատկացվող պատկառելի բյուջեն հաճախ անխուսափելիորեն ապահովվում է ի հաշիվ տնտեսության, կրթության, մշակույթի, առողջապահության և այլ ոլորտների զարգացման:

Քանի որ Հայաստանն անցել է խորհրդարանական կառավարման համակարգի, բացի խորհրդարանը ԱԱՌ-ի մշակման մեջ ընդգրկելուց, կարևոր է նաև Ազգային ժողովի՝ փաստաթղթին հավանություն տալը, ինչպես նաև զուգահեռաբար ընթացող սահմանադրական և օրենսդրական փոփոխությունների հետ ներդաշնակեցումը: Եվ վերջապես, ԱԱՌ-ն պետք է նաև համահունչ լինի միջազգային, հատկապես մարդու իրավունքների և իրավունքի գերակայության նորմերին:

Երբ երկիրը գտնվում է անցումային և փոփոխությունների ժամանակաշրջանում, ԱԱՌ-ի մշակումը պահանջում է տեսլական ունեցող առաջնորդություն՝ մտածողության փոփոխություն ապահովելու, կարծրատիպերի հաղթահարման, երկրնորանքների

²⁶ Sossi Tatikyan, *On the Elaboration of Armenia's New National Security Strategy*, 8 Aug 2019, <https://www.evnreport.com/raw-unfiltered/on-the-elaboration-of-armenia-s-new-national-security-strategy?fbclid=IwAR07H-rLAAE6ncRhv5GAf1zZWJQVrJe26rYHT6B9OnskY17Ue8H5RmhMd5E>

²⁷ Հայաստանում հանրային կառավարման համակարգում առկա խնդիրները, <https://www.aravot.am/2019/08/13/1059989/>

²⁸ ԱԽ քարտուղարի մամուլի ասուլիսը, 26/07/2019, <http://seco.am/information/interviews/39?lang=hy>

վերաբերյալ լուծումներ գտնելու և դժվարին որոշումներ կայացնելու համար: ԱԱՌ մշակելու գործընթացը նույնքան կարևոր է, որքան արդյունքը, քանի որ այն ուժեղացնում է շահագրգիռ կողմերի՝ ռազմավարական ծրագրավորման հմտությունները և խթանում է նրանց միջև փոխըմբռնումը:²⁹

3. Անվտանգության հաստատությունների բարեփոխումներ (ԱՀԲ) Սոսի Թաթիկյան

- Անվտանգության ոլորտի մասնակիցները
- Միջազգային կազմակերպությունների մոտեցումները, նորմատիվ փաստաթղթերը և սկզբունքները (ՄԱԿ, Եվրամիություն, ԵԱՀԿ, ՆԱՏՕ)
- ԱՀԲ-ի լրացուցիչ սկզբունքները
- ԱՀԲ-ի ռազմավարության կամ ծրագրի կառուցվածքը և տարբեր ասպեկտները
- Հայաստանում անվտանգության հիմնական հաստատությունները և նրանց բարեփոխումները

Անվտանգության ոլորտի մասնակիցները

Անվտանգության համակարգի համընդհանուր օրինակելի մոդել (կատարյալ ձև) չկա, և նրա կառույցներն ու մասնակիցները յուրաքանչյուր երկրում տարբեր են: Ընդհանուր առմամբ անվտանգության ոլորտի մասնակիցները բաժանվում են չորս խմբի: Անվտանգության պետական համակարգը բաղկացած է տարբեր ուժերից, ծառայություններից, նրանց կառավարման, վերահսկման, համակարգման և խորհրդատու գերատեսչություններից ու մարմիններից:

²⁹ Հայաստանում հանրային կառավարման համակարգում առկա խնդիրները, <https://www.aravot.am/2019/08/13/1059989/>

Պետական ուժեր և ծառայություններ

- Բանակ, ոստիկանություն, ազգային անվտանգության ծառայություն, քաղաքացիական պաշտպանության ուժեր, փրկարարներ/հրշեջներ/անտառապահներ, նախագահական թիկնազորեր, մաքսային ու սահմանապահ ծառայություններ, դատա-իրավական համակարգ, քրեա-կատարողական հիմնարկներ

Պետական կառավարման մարմիններ

• Մայրաքաղաք

- Պետության ղեկավար վարչապետ, նախարարություններ (պաշտպանություն, ներքին գործերի, արդարադատության, արտաքին գործերի, ֆինանսների), անվտանգության խորհուրդ
- Օրենսդրական
 - Խորհրդարան, խորհրդարանական մշտական հանձնաժողովներ (պաշտպանության և անվտանգության, դատա-իրավական, արտաքին հարաբերությունների, ֆինանսների), խորհրդարանի քննչական կամ փաստահավաք հանձնախմբեր
- Խորհրդակցական
 - Ազգային անվտանգության խորհուրդ, խորհրդականներ, մարդու իրավունքների պաշտպան
- Վերահսկիչ
 - Տեսչություններ, աուդիտ մարմիններ
 - Համակարգման
 - Միջգերատեսչական հանձնաժողովներ

Ոչ պետական ուժեր և ծառայություններ

- Անվտանգության և ռազմական մասնավոր ընկերություններ, մասնավոր զինված ուժեր, թիկնազորեր, զինված կամավորական կազմակերպություններ, կազմակերպված հանցավորության խմբեր, ոչ պետական զինված խմբավորումներ

Վերահսկման ոչ պետական մարմիններ

- Քաղաքացիական հասարակություն, ոչ կառավարական կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ, կուսակցություններ, հետազոտական և ակադեմիական կենտրոններ, մամուլ

Ուժերն ու ծառայությունները, այդ թվում՝ զինված ուժերը, ոստիկանությունը, հետախուզությունը, փրկարարները, սահմանապահ ու մաքսային ծառայությունները, դատաիրավական մարմիններն ու քրեակատարողական հիմնարկները անվտանգության պետական անմիջական ապահովողներն են: Կարող են լինել նաև անվտանգության ոչ պետական՝ մասնավոր կամ կոմերցիոն ապահովողներ, օրինակ՝ մասնավոր անվտանգության ընկերությունները, թիկնազորերը, իսկ զարգացող երկրներում՝ արդարադատության ավանդական գործիքակազմերը, անգամ ոչ պետական զինված խմբավորումները (թեև վերջիններս հաճախ անվտանգության սպառնալիք դառնալու հավանական վտանգ են ներկայացնում):

Միջազգային կազմակերպությունների մոտեցումները, նորմատիվ փաստաթղթերը և սկզբունքները

1) Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ)

ԱՀԲ-ի վերաբերյալ չկա միջազգայնորեն ընդունված համընդհանուր որևէ կոնվենցիա կամ համաձայնագիր, սակայն կան միջազգային տարբեր կազմակերպությունների, օրինակ՝ ՄԱԿ-ի, Եվրամիության, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի, Աֆրիկյան միության կողմից ընդունված մի շարք նորմատիվ փաստաթղթեր, որոնցում ամրագրված են ԱՀԲ-ի կամ դրանց առանձին ասպեկտների հիմնական նպատակները, սկզբունքներն ու դրույթները:

2007 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը և Գլխավոր ասամբլեան Գլխավոր քարտուղարին (ԳՔ) խնդրեցին պատրաստել համապարփակ զեկույց ԱՀԲ-ի հարցում ՄԱԿ-ի մոտեցումների վերաբերյալ: 2008 թ. Գլխավոր քարտուղարը հրապարակեց այդ թեմայով իր առաջին զեկույցը, որը կրում էր «Ապահովելով խաղաղությունն ու զարգացումը: ՄԱԿ-ի դերը անվտանգության հաստատությունների զարգացման գործում» խորագիրը³⁰: Ջեկույցում հանգամանալից դիտարկված են ՄԱԿ-ի մոտեցումները ԱՀԲ-ի հայեցակարգի, հիմնարար սահմանումների ու սկզբունքների վերաբերյալ: Այն ընդգծեց ԱՀԲ-ի կարևորությունը անվտանգության, զարգացման և մարդու իրավունքների համար՝ որպես երկարաժամկետ տևական խաղաղության մնայուն նախապայման, և պետության առաջնային պատասխանատվությունը անվտանգության ապահովման գործում: Ջեկույցում արձանագրվեց, որ անվտանգության հաստատությունները կարող են նաև էական խոչընդոտ լինել աղքատության հաղթահարման, մարդու իրավունքների հանդեպ հարգանքի, որակյալ կառավարման, տևական խաղաղաշինության և երկարաժամկետ զարգացման համար, եթե դրանք արդյունավետ չեն գործում և հաշվետու չեն հանրությանը, և սահմանվեց ԱՀԲ-ի ոլորտում պետություններին աջակցելու գործում ՄԱԿ-ի քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու միջոցով, համաձայն մարդու իրավունքների և իրավունքի գերակայության նորմերի, օգնել մարդկանց անվտանգության ապահովմանը միտված անվտանգության հաստատությունների գործունեությունն առավել արդյունավետ և հաշվետվողական դարձնելուն: Այդ փաստաթղթում ԱՀԲ-ին վերաբերող ՄԱԿ-ի ձևակերպած հիմնարար սկզբունքները հետևյալն են.

- Անվտանգության հաստատությունները պետք է գործեն արդյունավետ, լինեն ներառական և հաշվետու,
- ԱՀԲ-ն պետք է հիմնված լինի ազգային համաձայնության (կոնսենսուս) վրա,
- ԱՀԲ-ն պետք է իրականացվի ազգային սեփականատիրությամբ և հանձնառությամբ,
- ԱՀԲ-ի հանդեպ մոտեցումները պետք է լինեն ձկուն և արտացոլեն տվյալ երկրի կամ տարածաշրջանի իրողությունները,
- ԱՀԲ-ն պետք է լինի գեներային առումով զգայուն, հաշվի առնի նաև կանանց կարիքները և ամրապնդի նրանց դերը անվտանգության ոլորտում,
- Անհրաժեշտ է ԱՀԲ-ի վաղ նախաձեռնումը և ինտեգրումը հետհակամարտային և անցումային շրջանների վերականգնման ու զարգացման ծրագրերում,
- ԱՀԲ-ի ոլորտում աջակցությանը պետք է հետևի հստակ ռազմավարություն, և այն պետք է ուղեկցվի առաջնահերթությունների, ժամանակացույցերի ու գործընկերությունների սահմանմամբ,
- ԱՀԲ-ում միջազգային աջակցությունը պետք է իրականացվի ճիշտ ձևակերպված նպատակներով, հաշվետվողականությամբ ու ռեսուրսներով, ինչպես նաև ազգային և միջազգային գործընկերների փոխօգնության համակարգմամբ,
- ԱՀԲ-ն պետք է իրականացվի սահմանված նպատակների իրագործման առաջընթացի պարբերական մշտադիտարկմամբ և գնահատմամբ:

2011 թ. հաստատվեց պաշտպանության ոլորտում բարեփոխումների վերաբերյալ ՄԱԿ-ի

³⁰UN Secretary General's Report "Securing peace and development: the role of the United Nations in supporting security sector reform" (2008);

առաջին հայեցակարգը³¹: 2010-2011 թթ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ճանաչեց ՄԱԿ-ի կարևոր դերը թե՛ ԱՀԲ-ի ոլորտում տեխնիկական աջակցության ցուցաբերման գործում և թե՛ ազգային անվտանգության քաղաքականության ու ռազմավարության մշակման գործում (համապատասխան ազգային խնդրանքի դեպքում): 2012 թ. ՄԱԿ-ը հրապարակեց ԱՀԲ-ի տարբեր ասպեկտների վերաբերյալ ինտեգրացված (փոխհարմարեցված) տեխնիկական փաստաթղթեր (Անվտանգության ոլորտի ժողովրդավարական կառավարումը, Խաղաղության գործընթացներն ու ԱՀԲ-ն, գենդերային առումով զգայուն ԱՀԲ, ԱՀԲ-ների ազգային հանձնառությունը և Ազգային անվտանգության քաղաքականությունների և ռազմավարությունների մշակումը)³²:

2013 թ. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը հրապարակեց ԱՀ Բարեփոխումների վերաբերյալ երկրորդ գեկույցը՝ «Ապահովելով պետությունների ու հասարակությունների անվտանգությունը. ամրապնդելով ՄԱԿ-ի համապարփակ աջակցությունը ԱՀԲ-ում» խորագրով³³: Այդ գեկույցը ներկայացնում է առաջարկներ, թե ինչպես ԱՀԲ-ն կարող է դիմակայել առաջիկա կանխատեսվող կամ սպասվող մարտահրավերներին՝ այն կապելով հակամարտությունների կանխարգելման և խաղաղաշինության գործունեության հետ: Զեկույցում ընդգծվում է Միավորված ազգերի կազմակերպության կողմից պետությունների համապարփակ ու համակարգված աջակցության տրամադրման անհրաժեշտությունը՝ համաձայն ԱՀԲ-ներով սահմանված սկզբունքների:

2014 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց ԱՀԲ-ի վերաբերյալ առաջին՝ 2151(2014) բանաձևը³⁴: Վերջինս ԱՀԲ-ն դիտարկում է որպես պետության ու նրա քաղաքացիների արդյունավետ և հաշվետու անվտանգությունը բարձրացնելու գործընթաց, ընդ որում՝ առանց որևէ խտրականության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հանդեպ հարգանքով: Ավելին՝ ՄԱԿ-ը կարևորում է ԱՀԲ-ի դերը խաղաղության և անվտանգության ամրապնդման, հակամարտությունների կանխարգելման և հակամարտությունների կրկնության բացառման գործում: Բանաձևը սահմանեց ԱՀ Բարեփոխումների հետևյալ առաջնայնությունները.

- Ազգային անվտանգության գործում երկխոսության խթանումը,
- Ազգային անվտանգության համակարգի հաստատությունների ու կառույցների քարտեզագրումը, գնահատումն ու վերակառուցումը,
- Անվտանգության համակարգի հաստատությունների կառավարումը, համակարգումն ու վերահսկումը,
- Ազգային անվտանգության քաղաքականության և ռազմավարության մշակումը,
- Անվտանգության վերաբերյալ օրենսդրության մշակումն ու վերանայումը,
- Անվտանգության ոլորտի զարգացման ծրագրերը,
- Անվտանգության ոլորտի հանրային ծախսերի վերանայումը:

³¹ UN Policy on Defence Sector Reform (2011);

³² UN SSR Integrated Technical Guidance Notes (2012), including notes on the Democratic Governance of the Security Sector, Peace-Processes and Security Sector Reform, Gender-Responsive Security Sector Reform, National Ownership of SSR, and National Security Policy- and Strategy-Making;

³³ UN Secretary General's Report "Securing States and societies: strengthening the United Nations comprehensive support to security sector reform" (2013);

³⁴ UN Security Council first Resolution 2151(2014) on SSR;

2) Եվրամիություն (ԵՄ)

Անվտանգության հաստատությունների բարեփոխումների վերաբերյալ ԵՄ-ի ռազմավարական շրջանակով ԱՀԲ-ն սահմանվում է որպես երկրի անվտանգության համակարգը վերափոխելու գործընթաց՝ քաղաքացիներին ու պետությանը առավել արդյունավետ և հաշվետվողական անվտանգությամբ ապահովելու նպատակով: Ընդ որում՝ այդ գործընթացը պետք է իրականացվի մարդու իրավունքների, ժողովրդավարության, իրավունքի գերակայության և խելամիտ կառավարման սկզբունքներին համահունչ:

Եվրամիությունը ԱՀԲ-ն համարում է հակամարտությունների կանխարգելման, խաղաղաշինության և կայուն զարգացման կարևոր բաղադրիչ: ԵՄ-ն շեշտում է, որ անվտանգության հաստատությունները չպետք է քաղաքականացվեն ու ծառայեն կառավարող վերնախավին և ուղղված լինեն իշխանության պահպանմանը՝ վերջինիս ձեռքին գենք դառնալով: Հակառակը՝ դրանք առանց որևէ խտրականության պետք է պաշտպանեն հասարակության բոլոր անդամներին (ներառյալ կանանց, երեխաներին, ազգային փոքրամասնություններին)՝ միջազգային հումանիտար իրավունքի, մարդու իրավունքների ու օրենքի գերակայության սկզբունքներին համաձայն:

ԵՄ-ի ԱՀԲ սկզբունքները հետևյալն են.

- Ազգային կամ տարածաշրջանային հանձնառության սկզբունքով առաջնորդվող բարեփոխումների գործընթաց:
- Անվտանգության համակարգի արդյունավետությունն ապահովող հիմնական պահանջների բավարարում:
- Պետությունների և նրանց բնակչության առջև ծառայած՝ անվտանգության բազմազան մարտահրավերների հասցեագրում համապարփակ ձևով:
- Հանրային հատվածի կառավարման ժողովրդավարական սկզբունքների՝ հաշվետվողականության և թափանցիկության կիրառումը նաև անվտանգության համակարգի մեջ:
- Գործընկեր պետությունների հետ քաղաքական երկխոսության հիման վրա միասնական համաձայնությամբ մարդու իրավունքների, զարգացման և անվտանգության հասցեականությունը:

ԱՀԲ-ում ԵՄ-ի ռազմավարական քաղաքականության հիմնական նպատակն է.

- Գործընկեր պետություններին օգնել հստակ իրավական շրջանակ մշակելու գործում՝ առաջնորդվելով անվտանգության և արդարության քաղաքականության և ռազմավարության համապատասխան նորմերով, կառուցել և հզորացնել նրանց ինստիտուտները՝ սահմանելով յուրաքանչյուրի դերը, ընթացակարգերը, կառուցվածքը, անձնակազմն ու ռեսուրսները:
- Աջակցել անվտանգության ոչ միայն պետական, այլև ոչ պետական մասնակիցներին՝ նպաստելու համար մարդկային անվտանգության ապահովմանը՝ հաշվի առնելով նաև գենդերային հավասարության մոտեցումը:

Անվտանգության ոլորտի լեգիտիմությունը, արդյունավետ կառավարումը, կայունությունը, մնայունությունը և պատասխանատու անձանց բարեվարքությունն-ապահովելու համար այն պետք է.

- Համապատասխանի մարդու իրավունքների, օրենքի գերակայության և ժողովրդավարական միջազգային սկզբունքներին՝ ներառյալ թափանցիկությունը, բաց հաղորդակցումը, մասնակցությունն ու ներառականությունը, հաշվետվողականությունն ու կոռուպցիայի դեմ պայքարը:
- Լինի քաղաքացիական և ժողովրդավարական արդյունավետ վերահսկման ներքո, ինչպես նաև ունենա հաշվետվողականության ներքին մեխանիզմներ:

Այս ամենին հասնելու համար ԵՄ-ն կարևորում է ազգային և տեղական շահերը, առաջընթացի մշտադիտարկումն ու չափումը, ԱՀԲ-ի համապարփակ մոտեցումը, տեղայնացման տեղական համատեքստի համար բարենպաստ լուծումներն ու համակարգված մոտեցումը:

3) Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ)

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) նույնպես, ի թիվս այլ հարցերի, զբաղվում է անվտանգության հաստատությունների բարեփոխումների հարցերով: Այս ոլորտում առանցքային փաստաթուղթ է հանդիսանում ԵԱՀԿ-ի Անվտանգության քաղաքական-ռազմական ասպեկտների վերաբերյալ մոտեցումների նորմերը, որոնք սահմանում են զինված և անվտանգության ուժերի ժողովրդավարական վերահսկման սկզբունքները, ինչպես նաև զինված ուժերին վերաբերող մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները³⁵: ԵԱՀԿ-ն մշակել է անվտանգության ոլորտի կառավարման ու բարեփոխումների մի շարք նորմեր, որոնք կազմակերպությանը հնարավորություն են տալիս այդ ոլորտում օգնելու անդամ պետություններին:

Մերտորեն աշխատելով ու համագործակցելով կառավարությունների և քաղաքացիական հասարակության հետ՝ անվտանգության բնագավառում ԵԱՀԿ-ն անդամ պետություններին աջակցում է հետևյալում.

- Անվտանգության համակարգի հետ կապված օրենսդրական բարեփոխումներ:
- Բանակների կրճատում ու վերափոխում և զինված ուժերից զորացրված անձանց քաղաքացիական կյանքին ինտեգրվելու նպատակով վերապատրաստում:
- Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների պաշտպանությունը:
- Մարդու իրավունքների և հումանիտար իրավունքի հարցերի վերաբերյալ զինված ուժերի և անվտանգության անձնակազմի վերապատրաստում:
- Անվտանգության համակարգում պաշտպանության և անվտանգության հաստատությունների ներգրավվածության և անձանց բարեվարքության կանոնների սահմանում:
- Անվտանգության համակարգի հանդեպ խորհրդարանի վերահսկող դերի բարձրացում և քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցության քաջալերում:
- Զորակոչով ձևավորված ոչ արհեստավարժ բանակից արհեստավարժ բանակի անցման ընթացքում նրանց զորացրվող անդամների սոցիալական իրավունքների ապահովում³⁶:

4) Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն (ՆԱՏՕ)

³⁵ [OSCE Code of Conduct on Politico-Military Aspects of Security](#)

³⁶ <https://www.osce.org/reform-and-cooperation-in-the-security-sector>

ՆԱՏՕ-ն հիմնականում ուշադրություն է դարձնում պաշտպանության ոլորտի բարեփոխումների, պաշտպանական ինստիտուտների շինարարության, դրանց հանդեպ քաղաքացիական վերահսկման խթանման ու խրախուսման, նրանց բարեվարքության բարձրացման, այդ թվում՝ զինված ուժերում կոռուպցիայի դեմ պայքարի հարցերին: Նրա հետաքրքրության տեսադաշտում են նաև ոստիկանության, հետախուզության, սահմանային և այլ ծառայությունների հետ պաշտպանական ուժերի փոխգործակցության հարցերը:

«Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակում ՆԱՏՕ-ն պաշտպանական ոլորտում գործընկեր պետություններին աջակցություն է ցուցաբերում հետևյալ ծրագրերի միջոցով.

- Պլանավորման և վերանայման գործընթացի ծրագիր³⁷,
- Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր³⁸,
- Պաշտպանական ինստիտուտների շինարարության գործողությունների ծրագիր,
- Բարեվարքության ամրապնդման գործողությունների ծրագիր³⁹:

ԱՀԲ-ի լրացուցիչ սկզբունքներ

Բացի վերոնշյալ՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների սահմանած ընդհանուր սկզբունքներից՝ վերջին տասնամյակում տարբեր երկրներում ԱՀԲ-ի գործընթացի իրագործման ընթացքում ներդրվել և կիրառվել են նաև լրացուցիչ, սակայն վճռորոշ նշանակություն ունեցող հետևյալ սկզբունքները.

Պաշտպանության և ներքին անվտանգության ուժերի գործառույթների տարանջատման անհրաժեշտություն, ըստ որի՝

- Յուրաքանչյուր հաստատության գործառույթների հստակ սահմանում և ամրագրում Սահմանադրության և օրենսդրության մեջ:
- Ոստիկանության ապառազմականացում ու նրա ոչ թե ուժային, այլ քաղաքացիական բնույթ, թվաքանակի միջին հարաբերակցությունը բնակչության քանակի համեմատությամբ 1/250 սահմանում՝ կախված տվյալ երկրում հանցավորության աստիճանից, ներքին ահաբեկչության և քաղաքացիական անհնազանդության հավանականությունից, երկրի ժողովրդավարական գործընթացների բովանդակային խորքից և աստիճանից, տարածքի մեծության և բնակչության խտության փոխհարաբերակցությունից, տեխնիկական հագեցվածությունից և զինումից:
- Բանակի միջամտության բացառում ներքին անվտանգությանը վերաբերող հարցերում՝ բացի օրենսդրությամբ ամրագրված ու խորհրդարանի կողմից հաստատված արտակարգ դրության դեպքերի, օրինակ՝ ներքին ռազմական բնույթի վտանգի, ոչ պետական կամ անօրինական զինված խմբավորումների առկայության, ահաբեկչության և քաղաքացիական զինված ու լայնամասշտաբ բռնության դեպքերի: Տվյալ պարագայում

³⁷ [Partnership for Peace Planning and Review Process \(PARP\)](#)

³⁸ [Defence Institution Building](#)

³⁹ [Building Integrity](https://www.nato.int/cps/en/natohq/topics_68368.htm). NATO. https://www.nato.int/cps/en/natohq/topics_68368.htm

պետք է գործի ուժի համաչափության սկզբունքը և լիազորված լինի միայն աջակցող գործառնություն⁴⁰ :

- Բոլոր ուժերի ու ծառայությունների համագործակցություն, համակարգում և փոխհամատեղելիություն և փոխգործակցություն:

Ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողություն

- Պաշտպանության և անվտանգության ուժերի ու ծառայությունների վերահսկումը ժողովրդավարությամբ ընտրված քաղաքացիական իշխանությունների կողմից:
- Պետության իշխանությունների կողմից անվտանգության հաստատությունների գործունեության համար քաղաքական պատասխանատվություն, սակայն միաժամանակ այդ հաստատությունների և նրանց գործունեության ապաքաղաքականացումը:
- Խորհրդարանական վերահսկողությունը, որը պետք է հավանություն տա պետական բյուջեում անվտանգության համար նախատեսվող բյուջեին, անվտանգության քաղաքականությանը և օրենսդրությանը, ինչպես նաև իրավունք ունենա անվտանգության ոլորտի նախարարներին և ուժային կառույցների ղեկավարներին հրավիրելու խորհրդարան՝ ըստ անհրաժեշտության համապատասխան հարցումների և հարցադրումների պատասխանելու նպատակով :
- Քաղաքացիական հասարակության լայն շրջանակների ներգրավումն ազգային անվտանգության քաղաքականության ու ռազմավարության մշակման գործընթացներում:

ԱՀԲ-ի ռազմավարության կամ ծրագրի կառուցվածքը և տարբեր ասպեկտները

ԱԱՌ-ի ընդունմանը կարող է հաջորդել անվտանգության համակարգի, այդ թվում՝ ուժերի, ծառայությունների և կառավարման հաստատությունների համապարփակ բարեփոխումների ռազմավարությունը, ինչպես նաև համակարգային առանձին հաստատությունների՝ պաշտպանության ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, քաղաքացիական պաշտպանության և անվտանգության համակարգի այլ կառույցների կամ ստորաբաժանումների ենթաոլորտային ռազմավարություններն ու ծրագրերը:

ԱՀԲ-ն ոչ թե անվտանգության ուժերի ու ծառայությունների տեխնիկական զինմանն ու վերապատրաստմանն ուղղված նախաձեռնություն է, այլ կոչված է վերափոխելու մոտեցումները, քաղաքականությունն ու ռազմավարությունը, կառավարման ու կազմակերպչական մշակույթն ու ազգային շահառու կողմերի միջև հարաբերությունները:

Լավ զինված, տեխնիկապես հագեցած ու լավ վերապատրաստված անվտանգության ուժերն ու ծառայությունները անհրաժեշտ են, սակայն ոչ բավարար: Վատ ու սխալ կառավարվող ուժերն ու ծառայությունները կարող են նաև մեծ խնդիրներ ստեղծել, օրինակ՝ անվտանգությանը սպառնացող խնդիր դառնալ այն նույն հանրության համար, որին նրանք կոչված են պաշտպանելու: Դրա համար էլ անվտանգության կառավարման ինստիտուտները կարևոր

⁴⁰ On the use of the army in suppressing protests in Armenia in March 2008, Sossi Tatikyan, 12 September 2019, EVN. <https://www.evnreport.com/opinion/on-the-use-of-the-army-in-suppressing-protests-in-armenia-in-march-2008>

դերակատարում ունեն հաշվետվողականության մշակույթ և արդյունավետ վերահսկման մեխանիզմներ ստեղծելու համար:

ԱՀԲ ծրագրային փաստաթղթերում առանցքային տեղ է զբաղեցնում հաստատությունների գործունեության գնահատումը, որը ներառում է գործառնությունների, օրենսդրական հիմքերի, կառուցվածքի, բյուջեի, խնդիրների նկարագրումն ու վերլուծությունը: Դրան հաջորդում են վերահանված խնդիրների լուծման ուղիներն ու գործողությունների ծրագիրը: Թեև նման փաստաթղթերի կառուցվածքի համար չկա համընդհանուր մոդել, սակայն այն կարող է լինել հետևյալ կերպ.

Անվտանգության բարեփոխումների ռազմավարության բաղադրիչները	Յուրաքանչյուր հաստատության վերլուծության կառուցվածքը
<ul style="list-style-type: none"> • Տեսլականը • Ռիսկերի գնահատումը • Հիմնարար նպատակներն ու սկզբունքները • Հաստատությունների վերլուծությունը/գնահատումը • Օրենսդրական դաշտի գնահատումը • Առաջնայնությունները և դրանց հասնելու գործողությունները • Մարդկային, ֆինանսական տեխնիկական ռեսուրսները • Իրագործման մեխանիզմները • Համակարգող մեխանիզմները 	<ul style="list-style-type: none"> • Ենթատեքստը • Մանդատը/գործառնությունները • Բյուջեն • Հիերարխիան այլ մարմինների հետ • Արտաքին և ներքին վերահսկողության մեխանիզմները • Կառուցվածքը • Մարդկային ռեսուրսները • Թերություններն ու բացերը • Բարելավման ուղիները

ԱՀԲ-ի տարբեր սապեկտների միջև հավասարակշռության անհրաժեշտությունը

Համապարփակ ԱՀԲ-ի իրականացումը պահանջում է հավասարակշռել այդ բազմաշերտ գործընթացի տարբեր բաղադրիչներն ու սապեկտներ, մասնավորապես նորմատիվ և օպերատիվ, տեսական ու գործնական, երկարաժամկետ ու կարճաժամկետ, հեռահար բարեփոխումների և անմիջական կարիքներ հոգալու:

Պատասխանել պետության և անհատների անվտանգությանն ուղղված անմիջական սպառնալիքներին ու կարիքներին	Իրագործել երկարաժամկետ ինստիտուցիոնալ բարեփոխումներ և կարողությունների հզորացում
Բարձրացնել անվտանգության ուժերի ու ծառայությունների կարողությունները տեխնիկական վերազինման և վերապատրաստման միջոցով	Բարձրացնել անվտանգության կառավարման ու վերահսկման հաստատությունների համապատասխան կարողությունները և ամրապնդել մեխանիզմները
Իրականացնել վերոնշյալի ուղղությամբ տեխնիկական աջակցության ծրագրեր	Մշակել անվտանգության քաղաքականություն,

	ուղղակիություն և համապատասխան օրենսդրություն՝ միջազգային ստանդարտներին համապատասխան
--	--

Հայաստանում անվտանգության հաստատությունների բարեփոխումների բնույթն ու
 էվոլյուցիան (գարգացման ընթացքը)

Պաշտպանության ոլորտ

Հայաստանում անվտանգության համակարգի բարեփոխումների առումով առաջատար կարող են համարվել պաշտպանության նախարարությունն ու զինված ուժերը: Հայաստանի զինված ուժերը թե՛ գործադիր և թե՛ օրենսդիր մակարդակով գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո: Քաղաքացիական կարգավիճակով նախարար և քաղաքացիական ու զինվորական խառը անձնակազմ ունեցող պաշտպանության նախարարության կողմից զինված ուժերի վերահսկումն ապահովում է քաղաքական և ուժային-օպերատիվ գործառնությունների տարանջատումը՝ համապատասխան միջազգային ստանդարտներին: Հայաստանում զինված ուժերը ձևավորվում են զորակոչի միջոցով. ինչպես պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, այնպես էլ պայմանագրային հիմունքներով:

Զորակոչի կարևորությունը Հայաստանի համար պայմանավորված է Հայաստանի աշխարհագրական դիրքով և թշնամաբար ու անբարյացակամ տրամադրված սահմանակից որոշ հարևաններով, որոնք պաշտպանական սպառնալիք են ներկայացնում: Նույն պատճառով էլ Հայաստանն ունի իր բնակչության թվի համեմատ շուրջ 43800 անդամից բաղկացած մեծաթիվ բանակ, որի 60 %-ը ձևավորվում է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության միջոցով, իսկ 40 %-ը՝ պայմանագրային հիմունքներով: Այն ներառում է նաև արհեստավարժ սպաներ ու ենթասպաներ, ինչպես նաև 1200 խաղաղապահներ: 2018 թ. սկսած՝ ոչ միայն պայմանագրային զինծառայողները, այլև ոստիկանական զորքերը իրականացնում են մարտական հերթապահություն: Մինչ օրս ՀՀ խաղաղապահները ՆԱՏՕ-ի հովանու ներքո ծառայել են Կոսովոյում (KFOR), Աֆղանստանում (ISAF) և Իրաքում, իսկ ՄԱԿ-ի հովանու ներքո՝ Լիբանանում (UNIFIL) և Մալիում (MINUSMA): Հայաստանը այսօր նաև հումանիտար առաքելություն է իրականացնում Սիրիայում:

Կառավարության ծրագրի համաձայն՝ զինված ուժերի առանցքային նպատակն է Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության ապահովումը և Հայաստանի ու Արցախի անվտանգության մակարդակի շարունակական բարձրացումը: 2018 թ. հուլիսի 9-ին ՀՀ պաշտպանության նախարարը հրապարակեց իր ուղերձ-տեսլականը Կառավարության ծրագրում ամրագրված գերակա նպատակի և զինված ուժերի և պաշտպանության նախարարության գործունեության մյուս յոթ առաջնահերթությունների կենսագործման վերաբերյալ: Այդ ուղերձն ըստ էության ավելին է, քան տեսլականը: Այն հանդիսանում է հիմնարար փաստաթուղթ պաշտպանության բնագավառի քաղաքականության կամ հայեցակարգի համար⁴¹:

⁴¹ <http://www.mil.am/hy/news/5402>

ՀՀ ՊՆ տեսլականում արտացոլված յոթ առաջնահերթությունները հետևյալն են.

1. Զինված ուժերի համալրումը անհրաժեշտ քանակի և ժամանակակից սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և նյութատեխնիկական միջոցներով, ռազմական կառավարման արդիական սկզբունքների և համակարգերի ներդրումը և անձնակազմի մարտական վարպետության բարձրացման նոր չափանիշների սահմանումը:
2. Հակառակորդի հետ անմիջական շփման բնագծերի շարունակաբար համալրումը արդիական տեխնիկական միջոցներով և մարտական խնդիրների կատարման արդյունավետության բարձրացումը:
3. Անձնակազմի հետ տարվող աշխատանքների որակի և արդյունավետության էական բարձրացումը:
4. Զինծառայողների կրթության շարունակականության ապահովումը զինվորական ծառայության ողջ ընթացքում:
5. Զինծառայողների պատշաճ և ամբողջական նյութական բավարարումը:
6. Զինծառայողների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացումը, բնակարանային, բժշկական ապահովման և այլ ծրագրերի իրականացումը:
7. Միջազգային ինտեգրման և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնումը⁴²:

Տարածաշրջանային և միջազգային սպառնալիքների համատեքստում մշակված են նաև մինչև 2020 թ. ՀՀ պաշտպանության ոլորտի քաղաքականության և բարեփոխումների ուղղությունները: Դրանց հիմքում ընկած են 2014-2015 թթ. Պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ (Strategic Defense Review)) արդյունքներով ընդունված փաստաթղթերը, որոնք ստեղծվել են ԱՄՆ-ի ու Միացյալ Թագավորության աջակցությամբ: Մշակվել և հաստատվել են 2019-2024 թթ. համար պաշտպանության բնագավառի պլանավորման նոր առաջնորդող փաստաթղթերը, որոնցից կարևորներն են ՀՀ զինված ուժերի զարգացման 2019-2024 թթ. ծրագիրը և ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման 2019-2024 թթ. պետական ծրագիրը: Բացի դրանից՝ Հայաստանը շարունակում է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակում զինված ուժերի ծրագրավորման ու վերանայման գործընթացի (Planning and Review Process) ձևաչափով համագործակցությունը:

ՊՆ-ում կան անմիջականորեն նախարարին ենթակա վերահսկողական ծառայություն, ռազմական ոստիկանություն և ներքին աուդիտի ստորաբաժանում:

Պաշտպանության ոլորտը խորհրդարանական վերահսկողության է ենթարկվում Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից:

Վերջերս մեծ առաջընթաց է արձանագրվել զինծառայողների ծառայողական-պայմանների, այդ թվում սննդի ու հագուստի որակի բարելավման ուղղությամբ: Եթե նախկինում համատարած էին բանակում պարտադիր ժամկետային ծառայությունից (այդ թվում նաև կաշառքի միջոցով) խուսափելու դեպքերը, ապա այսօր ակնհայտ է նմանատիպ երևույթների նվազումը, և մեծացել է զինվորական ծառայություն իրականացնելու ցանկություն ունեցողների թիվը:

⁴² <http://www.mil.am/hy/news/5402>

Այնուամենայնիվ, զինված ուժերում, հատկապես պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն իրականացնողների շրջանում, շարունակվում է խնդրահարույց մնալ ոչ կանոնադրային հարաբերությունների հիմնահարցը, որի հետևանքով բանակում շարունակվում են սպանությունների, ինքնասպանությունների և բռնությունների դեպքերը, ինչպես նաև տեխնիկական խնդիրներն ու վթարները, որոնք իրենց հերթին հանգեցնում են մարդկային կորուստների:

Բացի այս հարցերի շուրջ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հետ համապատասխան պատասխանատուի միջոցով սերտ համագործակցությունից՝ ՀՀ ՊՆ-ում ստեղծված է մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոն և դրան կից՝ թեժ գիծ, որոնց նպատակը ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում մարդու իրավունքների և բարեվարքության (այդ թվում հակակոռուպցիոն գործունեության) ամրապնդման ապահովումն է⁴³: Եվրախորհուրդը Միացյալ Թագավորության ֆինանսավորմամբ իրականացնում է նաև «Մարդու իրավունքները և կանայք բանակում» ծրագիրը:

Հայաստանի պաշտպանության ոլորտում կա նաև ոչ պետական կազմակերպություն՝ ի դեմս Երկրապահ կամավորականների հասարակական կազմակերպության, որը հիմնականում միավորում է նախկին զինվորականների: Թեև հասարակության կողմից երկրապահների կազմակերպության հանդեպ ընկալումը միանշանակ չէ, սակայն նրանք որոշակի դեր են խաղում երկրի պաշտպանության ամրապնդման գործում: Մասնավորապես երկրապահները կամավոր հիմունքներով մասնակցություն են ունեցել 2016 թ. ապրիլյան պատերազմին:

Ոստիկանություն

ՀՀ վարչապետի 2018 թ. սեպտեմբերի 18-ի թիվ 1222-Ա որոշման համաձայն՝ ոստիկանության աշխատողների առավելագույն թիվը կազմում է 15402 ծառայող: Այս թվում ներառված չէ ոստիկանության գործերի զինծառայողների թիվը, քանի որ այն հանդիսանում է պետական գաղտնիք: Առավելագույն թվում ներառված են ոստիկանության ծառայողների, այդ թվում՝ արտաբյուջետային միջոցներով պահվող, ոստիկանության քաղաքացիական հատուկ ծառայողների, տեխնիկական սպասարկում և քաղաքացիական աշխատանք կատարող անձանց թիվը: Հայաստանում 100 000 բնակչին ընկնող ոստիկանության աշխատողների թիվը կազմում է 413 մարդ: Արևմտյան Եվրոպայում և ԱՄՆ-ում այս ցուցանիշը տատանվում է 155-370-ի, կենտրոնական և արևելյան Եվրոպայում՝ 200-450 միջակայքում, Ռուսաստանում՝ 547: Հայաստանը չունի հանցավորության բարձր աստիճան, մեծ տարածք և Երևանից դուրս խիտ բնակչություն, և ոստիկանության տեխնիկական զինվածությունը բավարար է (տեսակետ կա, որ ոստիկանության համեմատական մեծաքանակությունը պայմանավորված է եղել քաղաքական գործունեությամբ, օրինակ՝ իշխանությունների դեմ ցույցերի ճնշման անհրաժեշտությամբ):

Հայաստանը միջազգայնորեն ընդունված ցուցանիշների համեմատությամբ դասվում է ցածր ֆինանսական, նյութական և տեխնիկական ապահովվածությամբ ոստիկանություն ունեցող երկրների թվին: Վիճակը բավարար չէ հատկապես տարածքային ստորաբաժանումներում

⁴³ <http://www.mil.am/hy/structures/8>

փորձաքրեագիտական տեխնիկայի, կապի միջոցների և համակարգչային տեխնիկայի համալրվածության առումով: Օպերատիվ հետախուզական, փնտրողական, փորձաքրեագիտական, ինչպես նաև պետական պահպանության գործունեության ոլորտներում դեռևս մեծ է խորհրդային տարիների արտադրության տեխնիկական միջոցների տեսակարար կշիռը: Դեռևս լուծված չէ արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ընթացքում հասարակական կարգի պահպանությունը պատշաճ իրագործելու նպատակով ոստիկանությանը անհատական պաշտպանության միջոցներով, ռադիացիոն, ինչպես նաև քիմիական հետախուզության, դրոգաչափական և այլ հատուկ սարքերով և սարքավորումներով ապահովելու հարցը և այլն:

«Ոստիկանության մասին» օրենքը վերանայման կարիք ունի, որը նախատեսվում է 2020 թ. սկզբին: Ընթացքի մեջ է ոստիկանության համակարգի ռազմավարության մշակման գործընթացը: Արագ արձագանքման նպատակով նախատեսվում է ստեղծել նոր օպերատիվ կառավարման կենտրոն, որի համար ոստիկանությանը կտրամադրվի 680 պարեկային մեքենա: Այդ նպատակով կառավարությունը հանձն է առել վարկային ծրագրի շրջանակում ոստիկանությանը հատկացնել 50 մլն եվրոյին համարժեք գումար: 2019 թ. սեպտեմբերից ԱԺ-ի օրակարգում է ճանապարհատրանսպորտային պատահարների կանխման նպատակով բալային նոր համակարգի ներդրման վերաբերյալ օրինագիծը:

Ոստիկանության խնդիրները հետևյալն են.

- Ոստիկանության գործունեության որոշակի երկակիությունը (դուալիզմը). այն ունի թե՛ իրեն բնորոշ ծառայության և թե՛ ներքին գործերի գործառույթ: Սակայն տարբերվում է եվրոպական մի շարք երկրներում, օրինակ՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Պորտուգալիայում և Իսպանիայում դուալիստական ոստիկանության մոդելից և փոխարենը հանդիսանում է խորհրդային ժառանգության մոդել:
- Ոստիկանության և ԱԱԾ-ի միջև որոշ գործառույթների տարանջատման հստակության բացակայությունը, մասնավորապես կազմակերպված հանցագործության դեմ պայքարի, օպերատիվ հետախուզության, կոռուպցիայի դեմ պայքարի և հատուկ նշանակության օբյեկտների պաշտպանության ոլորտներում:
- Ոստիկանությունից քննչական մարմինների տարանջատումը նվազեցրել է չբացահայտված գործերով օպերատիվ ստորաբաժանումների հետ համագործակցության մակարդակը, թուլացրել բացահայտման արդյունավետությունը:
- Ոստիկանության շրջանում հակասական է վերաբերմունքը 2018 թ. ի վեր իրականացվող մարտական հերթապահության վերաբերյալ: Դա պայմանավորված է այն մտայնությամբ, որ ոստիկանական գործերը սահմանների պահպանության ոլորտում պետք է ներգրավված լինեն միայն որպես թիկունքային ուժեր, այն էլ՝ ռազմական դրության ժամանակ:
- Ոստիկանությունը անցել է ցույցերը բռնի ուժով ցրելու տեխնիկական վերապատրաստում՝ ԵԱՀԿ-ի ստանդարտներին համապատասխան⁴⁴:
- Հայաստանում ցույցերի մեծ մասամբ խաղաղ բնույթից ելնելով՝ ոստիկանությունը առավելապես խաղաղ, բայց չարտոնված ցույցերը կառավարելու հմտությունների կարիք ունի, որոնք առայժմ չի կարողացել ստանալ միջազգային գործընկերներից

⁴⁴ Human Rights Handbook for Policing Assemblies. OSCE/ODIHR 2016.

<https://www.osce.org/odihr/226981?download=true>

համապատասխան խորհրդատվության միջոցով: Ոստիկանությունը նաև մտավախություն ունի, որ ինչպես անհամաչափ ուժի կիրառումը, այնպես էլ չափից ավելի մեծ հանդուրժողականությունը կարող են հանգեցնել ոստիկանության արժանահավատության և հեղինակության կորստի:

- Ոստիկանությունը Հայաստանում քաղաքացիական հասարակության, մարդու իրավունքների պաշտպանի և միջազգային կազմակերպությունների կողմից բազմիցս քննադատվել է ցույցերի ժամանակ անհամաչափ ուժ կիրառելու համար: Հասարակության շրջանում ոստիկանությունն ընկալվում է նաև որպես կոռումպացված համակարգ: Հայաստանում ոստիկանությունը հաճախ քաղաքականացվել է իշխող վերնախավի կողմից՝ իր դեմ ուղղված ընդվզումները ճնշելու համար:

Ոստիկանության համակարգի բարեփոխումներում Հայաստանը հիմնական աջակցությունը ստացել է ԵԱՀԿ-ից, Ֆրանսիայից և ԱՄՆ-ից: Վերջերս ՆԱՏՕ-ն և Եվրամիությունը որոշ հետաքրքրություն են ցուցաբերել՝ աջակցելու համապատասխանաբար ոստիկանության բարեվարքության բարձրացման և ոստիկանության նորմատիվ շրջանակի մշակման գործում:

Ներքին գործերի նախարարության վերացումից հետո ոստիկանությունը չունի նախարարական մակարդակով գործադիր իշխանության կողմից վերահսկման մեխանիզմ և անմիջականորեն ենթարկվում է վարչապետին: Դա խնդիրներ է ստեղծում նաև խորհրդարանական մակարդակով՝ օրենսդիր վերահսկման համար, քանի որ ըստ օրենսդրության՝ ԱԺ համապատասխան հարցումներին պատասխանելու համար ներկայանալու պարտավորություն ունեն միայն նախարարները: Հետևաբար ոստիկանապետի հաշվետվողականությունը ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին կախված է նրա կողմից բարի կամք դրսևորելուց: Ոստիկանության համակարգում կան որոշ ներքին կարգապահական ստորաբաժանումներ, սակայն չկա միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ոստիկանությունը վերահսկող անկախ տեսչություն, որը ոստիկանության կառուցվածքից դուրս կլիներ ու կզեկուցեր ոստիկանությունը վերահսկող նախարարությանը կամ խորհրդարանական հանձնաժողովին:

Ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ)

ԱԱԾ-ում բարեփոխումների իրականացման վերաբերյալ չկան բավարար տեղեկություններ. այն պայմանավորված է այդ կառույցի «փակ» բնույթով և թափանցիկության պակասով: Հայտնի է միայն, որ մինչ այժմ ԱԱԾ-ի անձնակազմի աշխատակիցները կրթություն են ստացել բացառապես ՌԴ անվտանգության դաշնային ծառայության ակադեմիայում, Կալինինգրադի ու Կուրգանի սահմանապահ ինստիտուտներում, ինչպես նաև Պահպանության դաշնային ծառայության Օրյոլի ակադեմիայում: 2019 թ. հունիսին ԱԱԾ պետը հայտարարեց Հայաստանում ԱԱԾ ծառայողների կրթական կենտրոն հիմնադրելու մտադրության մասին⁴⁵:

Քաղաքացիական հասարակության շրջանում որոշակի անվստահություն կա ԱԱԾ-ի հանդեպ՝ կազմակերպչական մշակույթի առումով նախկին խորհրդային ժառանգությունից ազատված չլինելու կասկածների հետևանքով: Հաշվի առնելով հասարակական

⁴⁵ <https://armeniasputnik.am/armenia/20190605/18979899/hayastanum-kkarucvi-aac-carayoxneri-krtakan-hamalir.html>

մտահոգությունները՝ ս.թ. օգոստոսին ԱԱԾ-ն հայտարարեց, որ ծառայությունն իրեն չի համարում ԽՄՀՄ ՆԳԺԿ-ի (Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ) և ՊԱԿ-ի (Պետական անվտանգության կոմիտե) իրավահաջորդը⁴⁶:

Թավշյա հեղափոխությունից հետո քաղաքացիական հասարակության առանձին ներկայացուցիչներ ԱԱԾ լրուստրացիայի (քաղաքական գտում, գաղտնագերծում) ենթարկելու կոչեր են հնչեցնում: 2019 թ. մայիսին վեթինգի (գրադեցրած պաշտոնին համապատասխանության և բարեվարքության գնահատում⁴⁷) վերաբերյալ քննարկումների համատեքստում ԱԱԾ պետը հայտարարեց այդ հաստատության՝ վեթինգի ենթարկվելու պատրաստակամության մասին⁴⁸: 2019 թ. մայիսին վարչապետը հայտարարեց նախորդ իշխանությունների՝ հեռանալուց առաջ ԱԱԾ-ի արխիվների մի մասի ոչնչացման մասին⁴⁹: Հասարակության շրջանում բացասաբար ընկալվեց վարչապետի ու ԱԱԾ ղեկավարի միջև հեռախոսագրույցի գաղտնալսումը 2018 թ. դեկտեմբերին և ԱԱԾ պետի հրաժարականի շուրջ ստեղծված հակասական իրավիճակը 2019 թ. սեպտեմբերին:

Խորհրդարանական վերահսկման առումով ԱԱԾ-ն գտնվում է նույն վիճակում, ինչ ոստիկանությունը: Այն դուրս է թե՛ նախարարական մակարդակով գործադիր և թե՛ խորհրդարանական վերահսկողությունից և անմիջականորեն ենթակա է վարչապետին: Հետևաբար ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով ներկայանալու պարտավորվածություն չունի օրենսդրորեն, ինչը հիմնված է բարի կամքի դրսևորման վրա: Ի տարբերություն ոստիկանության՝ հետախուզական մարմինների նախարարական վերահսկումն առավել քիչ է ընդունված աշխարհում, փոխարենը որոշ երկրներում վերահսկվում է տեսչության կողմից, որն էլ ավելի է կարևորում խորհրդարանական վերահսկողության դերն այս կարգի մարմինների հանդեպ:

Արտակարգ իրավիճակների նախարարություն (ԱԻՆ)

ԱԻՆ-ը Հայաստանում վերահսկում է փրկարար ծառայությունը և պետական ռեզերվների գործակալությունը: Նրա կառավարման ներքո են գտնվում նաև «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն», «Հիդրոոդերևութաբանական ծառայություն», «Աղետների բժշկության կենտրոն», «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա», «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» և «Հատուկ լեռնափրկարար ծառայություն» պետական կազմակերպությունները: Ներկայում փրկարարների թիվը կազմում է 3500 մարդ, իսկ ԱԻՆ-ի անձնակազմի ընդհանուր թիվը շուրջ 6500 է:

2019 թ. սկզբին իրականացված պետական համակարգի կառուցվածքային փոփոխությունների համատեքստում ենթադրվում են նաև որոշ կառուցվածքային փոփոխություններ ԱԻՆ-ի համակարգում, օրինակ՝ պետական ռեզերվի պահպանության ստորաբաժանման տարանջատումը, սեյսմիկ պաշտպանության գործառնայի փոխանցումը քաղաքաշինության

⁴⁶ <https://infocom.am/?p=11993&l=am>

⁴⁷ Հարցազրույց Սոսի Թաթևյանի հետ, Armenian Public TV, 24 մայիսի, 2019 թ.

<https://www.youtube.com/watch?v=vqf6w7nwBrg&list=PLgwcwdu4wM5OU8V4qDnJ6ivxwiYOMzf&index=5&t=235s>

⁴⁸ <https://armeniasputnik.am/armenia/20190528/18832102/ete-petq-lini-aac-n-u-carayutyany-xekavarynel-vetingi-kentarkven.html>

⁴⁹ https://arminfo.info/full_news.php?id=41980&lang=1

պետական կոմիտեին, իսկ հիդրոտեխնոլոգիայի և էներգետիկայի նախարարությանը: Փրկարարական ծառայությունում նույնպես նախատեսվում են կառուցվածքային փոփոխություններ՝ ուղղված հիմնական կառույցների դերի ու արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կրկնվող կառույցների վերացմանը: Նախատեսվում է նաև բարձրացնել քաղաքացիական պաշտպանության գործառնության դերը՝ հավանական ռազմական իրավիճակներին հանրությանը նախապատրաստելու նպատակով:

ԱԻՆ-ը բավարար հագեցված չէ նորագույն տեխնիկական միջոցներով, որն էլ հանգեցնում է խնդիրների, մասնավորապես անտառային հրդեհներ մարելիս: Վերջերս ԱԻՆ-ը ֆինանսական և տեխնիկական աջակցություն է ստացել Ճապոնիայից, ԱՄՆ-ից, ՄԱԿ-ից, Գերմանիայից, Ռուսաստանի Դաշնությունից՝ ենթակառուցվածքների բարելավման և մեքենաներ ու գույք ձեռք բերելու նպատակով: ԱԻՆ-ը սերտորեն համագործակցում է նաև Կարմիր խաչի միջազգային և ազգային կազմակերպությունների հետ: Իր հերթին ԱԻՆ-ը հումանիտար օգնություն է ցուցաբերել Իրանին ու Սիրիային:

Քաղաքացիական պաշտպանության գործառնությի ԱԻՆ-ի կառուցվածքում միակն է, որը նախատեսում է զենքի գործածում: ԱԻՆ-ը երբևէ չի օգտագործվել քաղաքական նպատակներով. զբաղվել է միայն օրենսդրությամբ իրեն վերապահված օպերատիվ գործառնություններով: Փրկարարները կրթություն են ստանում Հայաստանի ճգնաժամային կառավարման ակադեմիայում, իսկ նրանցից ոմանք անցնում են միջազգային վերապատրաստում արտերկրում: 2019 թ. սեպտեմբերին կառավարությունը որոշում կայացրեց բարձրացնելու փրկարարների աշխատավարձը, մասնավորապես ներքին օդակների: ԱԻՆ-ը օրենսդրորեն վերահսկվում է ԱԺ-ի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի կողմից:

Խորհրդարանական վերահսկողություն

ԱԺ Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի գործունեության ոլորտները հետևյալն են՝ պաշտպանություն, ազգային անվտանգություն, ռատիկանություն, արտակարգ իրավիճակներ, ռազմարդյունաբերական համալիր, զինված ուժերում, ազգային անվտանգության, ռատիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայություն և այդ ոլորտները կարգավորող օրենքների մշակում: Ինչպես արդեն նշել ենք, պաշտպանության և արտակարգ իրավիճակների նախարարությունների ղեկավարները օրենսդրորեն հաշվետու են այդ հանձնաժողովին, սակայն ռատիկանության և ԱԱԾ-ի հաշվետվողականությունը հանձնաժողովին օրենսդրորեն հստակ ամրագրված չէ՝ պայմանավորված այդ ծառայությունների կառուցվածքային կարգավիճակով և վերահսկող նախարարության բացակայությամբ: Այդ հարցը պարբերաբար քննարկվում է ԱԺ-ում, և դրա համար առաջարկվում են տարբեր լուծումներ, այդ թվում՝ կառուցվածքային փոփոխություններ: 2019 թ. ստեղծվեց 2016 թ. ապրիլին Ադրբեջանի կողմից ծավալված քառօրյա պատերազմի ռազմական գործողությունների հանգամանքները ուսումնասիրող՝ խորհրդարանական քննիչ հանձնաժողով:

Անվտանգության խորհուրդ

Անվտանգության խորհուրդը գործում է 2018 թ. հունիսի 11-ին ընդունված՝ Անվտանգության խորհրդի կանոնադրության և հաստիքացուցակը հաստատելու մասին ՀՀ վարչապետի որոշման և նույն թվականի մարտի 7-ին ընդունված՝ «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա, որով հաստատվել է նաև Անվտանգության խորհրդի կազմը՝ վարչապետի գլխավորությամբ: Խորհրդի կազմի մեջ մտնում են փոխվարչապետները, պաշտպանության և արտաքին գործերի նախարարները, ոստիկանության և ԱԱԾ ղեկավարները և Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Վերջերս քննարկվել է նաև Խորհրդի կազմում ԱԺ նախագահի ներկայացվածության անհրաժեշտությունը:

2015 թ. Սահմանադրությամբ (1995 թ. հուլիսի 5-ի և 2005 թ. փոփոխություններով ընդունված) ամրագրված է, որ Անվտանգության խորհուրդը սահմանում է պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները, քննարկում է երկրի անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և սահմանների անձեռնմխելիությանը վերաբերող հարցեր: Սահմանադրական նշված փոփոխություններով Անվտանգության խորհրդին տրվել է սահմանադրական մարմնի կարգավիճակ, որը պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղություններին վերաբերող հարցերով ընդունում է քաղաքական որոշումներ, իսկ իր իրավասության մեջ մտնող այլ հարցերով՝ խորհրդատվական բնույթի որոշումներ⁵⁰:

Անվտանգության խորհրդի գրասենյակի գործառնությունները ներառում են Անվտանգության խորհրդին բազմաբնույթ աջակցությունը⁵¹: Ներկայումս ԱԽ-ի քարտուղարը և ԱԽ գրասենյակը ղեկավարում են Հայաստանի ազգային անվտանգության նոր ռազմավարության մշակման աշխատանքները: ԱԽ գրասենյակը զբաղվում է նաև անվտանգության սոցիալ-տնտեսական, Սփյուռքի, շրջակա միջավայրի պահպանության, կիբերանվտանգության և միջազգային համագործակցության հարցերով: Այն մշակում և համակարգում է անվտանգության և պաշտպանության ոլորտի հիմնարար փաստաթղթերը, ինչպես նաև մասնակցում է 17 միջգերատեսչական խմբերի, օրինակ՝ թմրամիջոցների դեմ պայքարի և միգրացիայի հարցերով աշխատանքներին:

Քաղաքացիական հասարակության ներգրավումը ԱՀԲ-ում

Վերջին տասնամյակներին ավելի ու ավելի է կարևորվում քաղաքացիական հասարակության ներգրավումը ԱՀԲ-ի գործընթացում՝ համարվելով ժողովրդավարության չափանիշներից մեկը և մարդկային անվտանգության ապահովման նախապայման:

Անվտանգության համակարգի ու քաղաքացիական հասարակության միջև կա փոխըմբռնման և փոխվստահության որոշակի պակաս: Անվտանգության համակարգի որոշ մասնակիցներ չեն ընկալում և ընդունում ՀԿ-ների դերը և անվստահություն ունեն նրանց հանդեպ՝ վերջիններիս մեղադրելով ազգային անվտանգության համար զգայուն հարցերի քննարկման ընթացքում ավելորդ հրապարակայնացման, ոչ կառուցողական քննադատության և առճակատում սերմանելու մեջ:

⁵⁰ http://seco.am/security_council/history?lang=hy

⁵¹ <http://seco.am/about/office?lang=hy>

ՀՀ պաշտպանության նախարարի ուղերձ-տեսլականում ընդգծված է, որ բանակը հասարակության անբաժանելի մասն է և պետք է առավելագույն թույլատրելի սահմաններում թափանցիկ լինի քաղաքացիական հանրության համար: Հասարակության լայն շերտերի, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների կողմից գինված ուժերում առկա խնդիրների վերհանումը կապահովի անկողմնակալ կարծիքի հաշվառմամբ մտքերի լայն փոխանակում՝ նպաստելու առավել արդար և արդյունավետ լուծումների որոնմանը և կենսագործմանը:

<p>ՀԿ-ները կարող են ԱՀԲ-ում խաղալ հետևյալ դերն ու գործառույթները.</p> <ul style="list-style-type: none"> • Իրագործող, զարգացնել ազգային և տեղային առանձնահատկությունների համար բարենպաստ մոտեցումներ և առաջարկել գործողություններ իրենց անվտանգության կարիքները հոգալու գործում մարդկանց ներգրավելու և հզորացնելու ուղղությամբ: • Գիտելիքներ տարածող և ունակություններ հզորացնող. մեծարժեք փորձագիտական գիտելիքների աղբյուր տեղական մակարդակում: • Հաշվետվողականության մոնիտորինգ (մշտադիտարկում). անվտանգության համակարգի, քաղաքականության և ռազմավարության, ծրագրերի ու դրանց պրակտիկ իրագործման հաշվետվողականության և թափանցիկության մշտադիտարկում: • Միացնող. համայնքների ու բնակչության խմբերի հարթակի ստեղծում, այդ թվում խոցելի խմբերի համար, իրենց անվտանգության կարիքները քննարկելու նպատակով: • Իրավունքների պաշտպանություն. խոցելի խմբերի անվտանգության կարիքների ու առաջնայնությունների՝ պետական մարմինների առջև բարձրացում:

Եզրակացություն

Ելնելով Հայաստանի արտաքին պաշտպանական կոնվենցիոնալ սպառնալիքներից ու ներքին անվտանգության հարցերում պետության և հասարակության բարձր պահանջներից՝ Հայաստանում անվտանգության հաստատությունները բավականաչափ կայացած են: Համակարգի առանձին բաղադրիչներ պարբերաբար իրականացրել են բարեփոխումներ իշխանությունների կողմից կայացված քաղաքական որոշումների հիման վրա և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ: Այնուամենայնիվ, այդ բարեփոխումները չեն կրել համապարփակ բնույթ, այլ վերաբերել են միայն համակարգի առանձին հաստատությունների: Արձանագրվել է առաջընթաց անվտանգության համակարգի հանդեպ քաղաքացիական վերահսկման ընդլայնման ամրապնդման գործում, սակայն այս ոլորտում կան նաև բացեր: Հետհեղափոխական Հայաստանում հայտարարված դատաիրավական բարեփոխումներին զուգահեռ ցանկալի կլինի սկսել անվտանգության ինստիտուտների համընդհանուր և համապարփակ բարեփոխումների գործընթաց: Այդ գործընթացը նախաձեռնելու և իրագործելու ուղղությամբ անհրաժեշտ է գործադիր և օրենսդիր իշխանությունների ու քաղաքացիական հասարակության համագործակցության հետագա ընդլայնումը Հայաստանում: